


Իրանահայ համայնք



Ցայտարարութիւն

Օրեր առաջ Թեհրանահայ «Համայնք» կայքէջը իր «Ձրուցարան» բաժնում շինծու եւ մտացածին գրութիւններ էր տեղադրել Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ նրա Վարչութեան մի անդամի դէմ, որ կապւելով այդ կայքի պատասխանատուի հետ, նրան զգուշացրինք կեղծ լրատուութեան եւ կատարած զրպարտութեան հետեւանքների մասին: Սակայն, ընդամենը մի քանի օր անց այդ կայքի պատասխանատու արն. Ռուբիկ Սարգսրեանը, Փետրուարի 7-ին, կրկին ի յայտ եկաւ աւելի գոեհիկ մի այլ գրութեամբ:

Մենք լաւատեղեակ ենք արն. Սարգսրեանի համայնքում վաստակած, մեղմ ասած, ոչ լաւ համբաւի ու անցելի մասին: Տեղեակ ենք նրա գործունէութեան եւ պահածքի հետեւանքով Հ.Ս.Մ. «Բաֆֆի» համալիրի Սկաուտական բաժնի պատասխանատուութիւնից զրկման, «Արաքս» շաբաթաթերթի խմբագրութիւնից նրա հեռացման, «Լոյս» ամսագրի տնօրէնի պաշտօնից նրա զրկման, Արաք քաղաքի հայոց միութիւնում իր անվայել պահածքի պատճառով ծեծի ենթարկման, զեղծարարության մեղադրանքով ձերբակալման եւ այլնի մասին: Նոյնպէս տեղեակ ենք թեմիս Առաջնորդի խօսքերի ու նաեւ «Թունեան» դպրոցի կապակցությամբ թերի, սուտ եւ պախարակելի լրատուութեան մասին...:

Այս ամէնից յետոյ, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը ամենեւին չի ցանկանում ստանալ արն. Սարգսրեանի «բարի խորհուրդները», կոկորդիլոսի արցունքները փաստօրէն անպատասխանատու եւ ամբարտաւան յայտարարութիւնները:

Մեզ ամենեւին չի հետաքրքրում թէ յիշեալը, որ անձին կամ որ կողմին տուրք տալու համար է ցեխարձակումներ կատարում Հ.Բ.Ը.Մ. Վարչութեան եւ նրա Նախագահի հասցէին, սակայն կրկին ու վերջին անգամ նրան զգուշացնում ենք, ինքնասանձ, դադարեցնի զրպարտիչ իր գրութիւնները, այլապէս կը գտնուի օրէնքով պատասխանատուութեան կանչւելու դիմաց:

Թեհրան,  
Հ.Բ.Ը.Մ. Վարչութիւն

Հրապարակէ՞ք Վանքից անհետացած իրերի ցուցակը

Լոնտոնի հռչակավոր Sotheby's-ում վաճառվել է 17-րդ դարի հայկական ձեռագիր ավետարան Վաճառված ավետարանը Սպահանի Մբ. Ամենափրկիչ վանքից թալանված իրերից չէ՞ր



«Արաքս» շաբաթաթերթ, Թեհրան, 14.12.2011: Հռչակավոր «Sotheby's» աճուրդի տանը օրերս վաճառվել է 17-րդ դարի հայկական ձեռագիր ավետարան: Ինչպես հայտնում է աճուրդի տան կայքը, հնարավոր է, որ այն ստեղծվել է 1671 թ-ին: Գրքի նախնական արժեքը տատանվել է 4-6 հազար անգլիական ֆունտ ստեռլինգ, վաճառվել 13.750 ֆունտ ստեռլինգով: Այս մասին տեղեկացնում է «panarmenian.news» կայքէջը: Լրատվության համաձայն մագաղաթյա ձեռագիրը բաղկացած է 271 էջից, որի վրա գրված է սև թանաքով և «բոլորգիր» կոչված տառատեսակով: Այն հարուստ է բազմաթիվ զարդանախշերով, պարունակում է թռչունների, կենդանիների և մարդկային ֆիգուրներ: Բնական ներկերի հետ օգտագործվել է նաև ոսկի: 25 x 17.5 սմ չափսի ձեռագրի ստեղծման վայրի, ավետարանչի անվան կամ ծաղկողի մասին կայքը ոչ մի տեղեկություն չի տալիս: Կազմը կարված է կտորից: Մինչ այս պահը, մեզ անհայտ է թե որտեղից է «Sotheby's» աճուրդի տանը հայտնվել 17-րդ դարի հայկական ձեռագիր ավետարանը: Չենք կարող մեղադրել ոչ Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդին, ոչ էլ այլ կողմի: Սակայն հաստատորեն կարող ենք ասել որ եթե ապագայում հայտնաբերվի, որ հիշյալ ձեռագիր ավետարանը մաս է կազմում Սպահանի Մբ. Ամենափրկիչ վանքի թանգարանից գողացված իրերին, այդ պարագային ՍՀԹ Թեմական խորհրդի անդամները, բոլորով հանդերձ, ոչ թե թերացած կլինեն իրենց պարտականություններում, այլ մեղսակցած կատարված հանցագործության մեջ. Որովհետեւ Սպահանի ՀԹ Թեմական խորհուրդը լինելով ընտրյալ կառույց պատասխանատվություն է կրում Պատգամավորական ժողով ընտրած հայ քաղաքացիների առջեւ եւ պարտավոր էր աշխատել ԹՄՓԱՆՅԻԿ ԵՎ ՕՐԵՆՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ, եւ ոչ ինչպես ինքն է հայտարարել «խորհրդապահօրէն» հարցերը լուծելու իր որոշման մասին: Մենք կրկին անգամ Սպահանի ՀԹ Թեմական խորհրդից պահանջում ենք հայտարարությամբ հանդես գալ իր

կատարած քայլերի մասին, եւ թեկուզ հապաղումով հրապարակել Վանքից անհետացած իրերի ցուցակը եւ հստակեցնել որ արդո՞ք «Sotheby's» աճուրդի տնում հայտնված 17-րդ դարի հայկական ձեռագիր ավետարանը պատկանում է Վանքի թանգարանին թե ոչ:

Հիշեցնենք, ավարտվող տարվա հունիսի 12-ին, Լոնդոնում, երկու հայեր փորձել էին վաճառքի հանել Սպահանի Սբ. Ամենափրկիչ վանքի թանգարանից թալանված 14-րդ եւ 17-րդ դարերին պատկանող հայկական ազգային ժառանգության մասունքներ, Որոնց մասին մինչ այդ որեւէ տեղեկություն չէր հրապարակել ՄՀԹ Թեմական խորհուրդը, իսկ մամուլի արդար հարցումներին ի պատասխան այդ Խորհուրդն անընդհատ պնդում էր, թե հարցը հետապնդում է «խորհրդապահօրէն»: Եվ հակառակ նրան, որ հոկտեմբերի 3-ին, Սպահանում, երեք կասկածյալներ են ձերբակալվել այդ կապակցությամբ ու նույնիսկ ոստիկանության կողմից արգրավված է «մի շարք գողացած պատկերներ», ցայժմ Թեմական խորհուրդը չի հրապարակել թալանված իրերի ցանկը:

**Ատրպատականի հայոց թեմի նորանշանակ կաթողիկոսական փոխանորդ Տ. Գրիգոր ճ. վրդ. Զիֆթճեանը ժամանեց Թարիզ**



Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա-ի տնօրինութեամբ Ատրպատականի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ նշանակած Տ. Գրիգոր ճ. վրդ. Զիֆթճեանը երեքշաբթի, յունւարի 3-ին, երեկոյեան ժամը 7-ին, Թարիզ ժամանելով Ս. Սարգիս եկեղեցում դիմաւորեց Թարիզի հայ համայնքի կողմից: Հայր Սուրբին Թեհրանում դիմաւորել էր Ատրպատականի հայոց թեմի Պատգ. ժողովի Ա. ատենապետ դոկտ. Մկրտիչ Թումանեանը, իսկ Թարիզի օղանաւակայանում նրան դիմաւորեցին Ատրպատականի հայոց թեմի Պատգ. ժողովի եւ Թեմական խորհրդի անդամները, Ուրմիայի հոգեւոր հովիւ Տ. Ներսէս քհնյ. Պասիլեանը գլխաւորութեամբ թեմի Պատգ. ժողովի Բ. ատենապետ Փայլակ Սահակեանի:

**Ո՞ր են տանում Նոր Ջուղայի դէպքերը Ինչո՞վ է առնչուում թանգարանի թալանի հետ Այլ մանրամասներ շուտով:**

Նոր Ջուղայից մեր աղբիւրները տեղեկացնում են, որ վերջերս Սպահանի հայոց թեմի առաջնորդարանի պատասխանատու աշխատակիցներից մէկը «զեղծարար-ուրթեան եւ կեղծ փաստաթղթեր պատրաստելու» մեղադրանքով հեռացել է աշխատանքից:

Թէ որքանով են հնչեցրած մեղադրանքներն համընկնում իրականութեանը, գոնէ մեզ համար դեռ պարզ չէ: Սակայն Նոր Ջուղայում, արդէն իսկ, շշուկներ են տարածել թէ «աշխատանքից հեռացած անձը առնչութիւն է ունեցել նաեւ անցեալ տարւայ ընթացքում այդքան աղմուկ բարձրացրած Սբ. Ամենափրկիչ Վանքի թալանի հետ»:

Միս կողմից հեռացած անձը շեշտել է, որ «Այնտեղ (առաջնորդարանը) աշխատելու տեղ չէ: Այլանդակ վիճակ է տիրում Վանքում, ով ինչ ուզում անում է, դրա համար էլ ես հրաժարել ու դուրս եմ եկել»: Ապա յաւելել է, որ ինքը որեւէ կապ չի ունեցել եւ չունի թալանների եւ ազգային ունեցածքի հետ ու միշտ էլ ազնւօրէն է աշխատել եւ ազգայինը բարձր է դասել սեփականից: Ժողովրդի լատտեղեակ խաւն էլ այն կարծիքի է, որ աշխատանքից հեռացած անհատը իրականում առաջնորդարանի գործերը տնօրինող կուսակցականների հակասութեանց գոնէ է դարձել: Իսկ թէ վերջապէս ո՞րն է ճշմարտութիւնը, ինչպէս ասում են կապրենք կը տեսնենք:



**Հայաստան**

**ԸՆՅԱՍՏԱՆԻՆ` 40 ՄԼՆ, ԱՐՅԱՆԻՆ` ՄՈՏ ՉՄՆ**

Հայաստանին ԱՄՆ աջակցության շրջանակներում 2012-ին կտրամադրվի 40 մլն դոլար, Ադրբեջանին` 16,1 մլն, իսկ Վրաստանին` 66 մլն: Ամերիկայի հայկական համագումարը տեղեկացնում է, որ ԱՄՆ Կոնգրեսը հաստատել է Հայաստանին տրամադրվող աջակցությունը, պահպանել Լեռնային Ղարաբաղին աջակցության նախկին ծավալները` մոտ 2 մլն դոլարի չափով ու Հայաստանի եւ Ադրբեջանի առումով ռազմական աջակցության հավասարակշռությունը` իր 2012-ի արտաքին աջակցության փաստաթղթում:

Աջակցության նշված ծավալները առաջարկվել են Բարաք Օբամայի կողմից, որոնք էլ հաստատել է ԱՄՆ Կոնգրեսը: Արտաքին աջակցության փաստաթղթին կից գեկույցում նշվում է, որ Մեծամասն ու Ներկայացուցիչների պալատը հատուկ նշում են արել, որ Հայաստանի եւ Ադրբեջանի առնչությամբ հարկ է հավասարակշռություն պահպանել ոչ միայն արտաքին ռազմական ֆինանսավորման, այլեւ միջազգային ռազմական կրթության եւ դասընթացների մակարդակներում:

**8 մլն դոլարի առք եւ վաճառք` հայկական բորսայում**

Հունվարի 16-ին ՆԱՄՂԱՔ ՕԷՄԵՔՍ ԱՐՄԵՆԻԱ ԲԲԸ-ում կայացել է 8,000,000 ԱՄՆ դոլարի առք եւ վաճառք` 389.47 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց միջին կշռված փոխարժեքով: Փակման գինը կազմել է 388.75 դրամ: [HayNews.am](http://HayNews.am)

**Հնարավոր է իրանցի գործարարների ներհոսք Հայաստան**

«2011-ին, բացի շինարարության բնագավառից, մյուս բոլոր ոլորտներում աշխուժություն է նկատվել»,-նշել է «Այլընտրանք» հետազոտական կենտրոնի ղեկավար Թաթուլ Մանասերյանն` այսօր հրավիրված ասուլիսի

## Ժամանակ անդրադառնալով 2012-ի տնտեսական մարտահրավերներին:

Տնտեսագետը նկատել է, որ 2012-ին դժվար է լինելու շարունակել այս միտումը, ինչին նպաստելու են և արտաքին և ներքին պայմանները. «Այդ ամենը պայմանավորված է ԱՄՆ-ի ներքին և արտաքին քաղաքականությամբ և Եվրամիության վիճակով: Եվրոյի դիրքերը թուլացել են, և նախատեսվում է, որ 2012-ին 1 դոլարը կհավասարվի 1 եվրոյի»: Ըստ Մանասերյանի՝ որպեսզի Հայաստանը ճգնաժամի արդյունքում շահող լինի, պետք է, որ գերակա դառնա տեղական արտադրությունը. «Մենք ունենք տնտեսական կախվածություն Ռուսաստանից և Եվրամիության անդամ երկրներից, և ՀՀ տնտեսությունը պետք է կարողանանք դիվերսիֆիկացնել: 2012-ի ճգնաժամից դուրս գալու համար պետք է նախևառաջ խրախուսել փոքր և միջին բիզնեսը, թեթևացնել հարկային ոլորտը: Մեծ նշանակություն է ունենալու դրական PR-ը, որպեսզի արտաքին շուկայում հաջողության հասնենք: Այս մասին պետք է հոգա պետությունը»: Խոսելով գնաճի մասին՝ Մանասերյանն ասել է. «Գնաճը շատ մտահոգիչ երևույթ է: Ես կառավարությանը կառաջարկեի վերանայել դրա դեմ պայքարելու մեթոդները: Միայն Կենտրոնական բանկը չի կարող պայքարել դրա դեմ: Պետությունը կարգադրիչ-վերահսկող գործընթացները լավ չի իրականացնում»: Տնտեսագետը նկատել է, որ եթե տարբեր երկրներում պետությունն ինքն է սահմանում գյուղատնտեսական մթերքների գները, ապա մեզ մոտ «գների մենաշնորհություն» է. «Հենց դրանով էլ բացատրվում է այդ ապրանքների բարձր գները»: «Իրանի շուրջ ստեղծված իրավիճակի հետևանքով հնարավոր է Իրանից գործարարների ներհոսք Հայաստան», - հավելել է բանախոսը:

## Էռնեկյանն Արցախին ինքնաթիռ է նվիրելու

*Արգենտինահայ միլիարդատեր Էդուարդո Էռնեկյանը Ստեփանակերտի օդանավակայանին ինքնաթիռ է նվիրելու: Այս մասին լրագրողների հետ հանդիպման ժամանակ տեղեկացրել է Արցախի վարչապետ Արա Հարությունյանը:*

Նշենք, որ վերջերս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը «Հայաստան» համահայկական հիմնադրամի շրջանակներում այցելել էր Արգենտինա, որտեղ գործարար Էռնեկյանը խոստացել էր ինքնաթիռ նվիրել Արցախին: Հարությունյանի խոսքերով՝ Էռնեկյանի խոստացած 11 միլիոն դոլարի մեջ մտնում է ոչ միայն ինքնաթիռի ձեռքբերումն, այլ համապատասխան օդայունների ուսուցման ծրագրերի կազմակերպում: Արցախի վարչապետը հավելել է. «Արցախի պետությունը միջոցներով հնարավոր է եղել կառուցել օդանավակայանը, ամբողջապես վերակառուցել թռիչքուղին ու ձեռք բերել անհրաժեշտ սարքավորումներ»:

## ՉԻՆԱԿԱՆ ԱԿՏՈՐՈՒՄՆԵՐԸ՝ ԵՐԵՎԱՆԻՆ

Հայաստանի Հանրապետության եւ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարությունների կնքված պայմանագրերով Հայաստանին որպես նվիրատվություն փոխանցված 249 քաղաքային ավտոբուսները եւ դրանց պահեստամասերը կնվիրաբերվեն Երեւան քաղաքին: Չինաստանի կողմից Հայաստանին ավտոբուսներ տրամադրելու մասին բազմիցս անդրադարձել ենք մեր թերթում: Դրանց Հայաստան

հասնելու մասին ժամկետներն էլ պարբերաբար փոխվում են: Երեւանի քաղաքապետարանից հայտնել էին, որ առաջին 70 ավտոբուսը Երեւանում պետք է լինեին սեպտեմբեր-հոկտեմբերին, ապա դարձավ նոյեմբերին, հիմա էլ՝ դեկտեմբերին: Սակայն առայժմ չինական ավտոբուսները չեն շտապում հասնել Հայաստան: Երեւանի քաղաքապետարանում գիտե՞ն այդ մասին:

## Թմրանյութի փաթեթների վրա լուսարձակներ են տեղադրել եւ Իրան-Հայաստան սահմանից շարտել

*Փետրվարի 11-ի լույս 12-ի գիշերը ռուսիկանության 6-րդ վարչության թմրանյութերի անօրինական շրջանառության վարչության աշխատակիցները Մեղրի-Ազարակ ճանապարհին բերման են ենթարկել մի խումբ երիտասարդների, որոնց մոտից հայտնաբերվել է ափիոն տեսակի թմրանյութ:*

Այս մասին HayNews.am-ի թղթակցի հետ զրույցում հայտնեցին ռուսիկանության լրատվության վարչությունից: Թմրանյութը փաթեթավորված է եղել, յուրաքանչյուր փաթեթ պարունակել է 100 գրամ: Սակայն այս դեպքը ուշագրավ է մեկ այլ հանգամանքով: Պարզվել է, որ այն Իրանից Հայաստան են տեղափոխել ոչ թե տրանսպորտային միջոցով, այլ Իրանի սահմանից նետելով դեպի Հայաստանի կողմ: «Հնարամիտ» թմրամուլները փաթեթներին ամրացրել են լուսարձակներ, որպեսզի կարողանան մթության մեջ փաթեթը հեշտ գտնել: Սակայն այս տեխնիկան այնքան էլ բարենպաստ չի եղել, քանի որ ճիշտ ուղղություն չբռնելու հետևանքով մի քանի փաթեթ հայտնվել է չեզոք գոտում, մեկն էլ ընկել է գետը: Ի դեպ, որոշ տեղեկությունների համաձայն, այս մեթոդը նույն խմբի ձեռագիրն է: Ավելի ուշ պարզվել է, որ իրանական կողմից ուն քաղաքացու հետ ձեռք բերված այս առք ու վաճառքը կատարվել է Գորիսի բնակչի պատվերով:

## Ռուսները Հայաստանի ինտերնետն էլ գնեցին

«Ռոստելեկոմ» ընկերությունը ձեռք է բերել Հայաստանում ամենամեծ անկախ ինտերնետ մատակարար GNC-Alfa ընկերության ակցիաների 75 տոկոսը:

## Մեղրիում թմրանյութի աննախադեպ քանակ է հայտնաբերվել



*Ավելի քան 11 կիլոգրամ թմրանյութ՝ ճամպրուկում. Նախաբացթողումային հսկողության վարչության աշխատակիցները թմրանյութի ապօրինի ներկրման աննախադեպ դեպք են հայտնաբերել:*

Պետական եկամուտների կոմիտեի նախաբացթողումային հսկողության վարչության աշխատակիցները տարեկերջին թմրանյութի ապօրինի ներկրման խոշոր դեպք են բացահայտել

Մեղրիի մաքսակետում, որն, ըստ Նախաբացթողումային հսկողության վարչության պետ Վահրամ Գուրդոյանի, աննախադեպ է մաքսային ծառայության ամբողջ պրակտիկայի ընթացքում. 2011թ. դեկտեմբերի 29-ին, գիշերը 2-ի սահմաններում Մեղրիի մաքսակետում Նախաբացթողումային հսկողության վարչության աշխատակիցները զննման են ենթարկել Իրանի քաղաքացի Սաիդ Միլանիին պատկանող ուղեբեռը, արդյունքում ճամպուրակի թաքստոցից հայտնաբերվել է 11 կիլոգրամ 200 գրամ թմրանյութ: Դեպքի առթիվ ՊԵԿ քննչական վարչությունում հարուցվել է քրեական գործ և Սաիդ Միլանիի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

### Պատմության էջերից...

*Թերեւս քչերն են հիշում, որ երեկ լրացավ Լեոնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ղարաղաղլու գյուղի ազատագրման 20 տարին: 1992-ի փետրվարի 17-ին էր, եւ այդ գյուղը վերագտավ իր հայկական շունչը՝ Ղարաղաղլուն դարձավ Արջածոր: Չնոռանանք գյուղի ազատագրման հերթական տարեդարձն ու խոնարհվենք հերոս-նահատակների հիշատակին:*

Պատերազմում ձեռքբերումներն ու կորուստները միշտ միասին են: Մարտունու շրջանի կենտրոնում գտնվող այդ գյուղը ռազմավարական տեսանկյունից կարեւոր նշանակություն ուներ. նախ՝ Ղարաղաղլուն Լեոնային Ղարաբաղի տարածքում գտնվող Ադրբեջանի ազգային բանակի հանգրվաններից էր, բացի դրանից՝ այն հսկողության տակ էր պահում Մարտունի-Ստեփանակերտ ավտոմայր-ուղին: Երկու օր տեսած ռազմական գործողությունների արդյունքում Ղարաղաղլուն ազատագրվեց՝ ոչ առանց զոհերի եւ վիրավորների: Երկու օր լուրը գուժում էր գյուղի ազատագրման համար մղված մարտում հերոսաբար ընկածների անունները՝ Էդիկ Մելքումյան, Մերգեյ Գրիգորյան, Արթուր Գոքոբյան: Մարտական ընկերները Էդիկ Մելքումյանին "Արջ" էին կոչում: Էդիկն առաջիններից էր, ով 1989-ին անդամակցել էր "Արաբո" ջոկատին: Ղարաղաղլուի ազատագրման մարտում նա առաջինն էր մտել բնակավայր՝ իր վրա վերցնելով թշնամու կրակը: Դա ընկերներին թույլ էր տվել շրջանցել կրակակետը եւ ոչնչացնել այն: Այդ մարտում էլ "Արջը" գոհվել էր՝ փրկելով զինակից ընկերներին: Էդիկը մարտի դաշտում մի կարգախոս ուներ՝ առջեւում պետք է լինեն նրանք, ովքեր երեխաներ ունեն: Էդիկ Մելքումյանը երեք զավակների հայր էր: Այսպես Էդիկը, Մերգեյը, Արթուրն ու "Արաբո" ջոկատի մյուս ազատամարտիկները հաջողությամբ վնասազերծեցին Ղարաղաղլու գյուղի կրակակետերն՝ այդ կերպ մոտեցնելով նաեւ Շուշի տանող հաղթական ճանապարհը:



### ՅԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ՝ ԼԵԳԵՆԴԱՐ ՀԵՏԱԽՈՒՑՁԻ ՄԱՀՎԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ



Մոսկվայում մահացել է ԽՍՀՄ հերոս, անվանի հետախույզ Գեորգ Վարդանյանը: Այս կապակցությամբ Վարդանյանների ընտանիքին, Գեորգ Վարդանյանի այրուն իր ցավակցագիրն է հղել Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը: Նախագահը մասնավորապես նշել է, որ «հայ ազգի զավակ Գեորգ Վարդանյանը իր ողջ կյանքի ընթացքում մշտապես կապ է պահել Հայաստանի հետ, իր խորհուրդներով ու աջակցությամբ նպաստել արտաքին հետախուզության կայացմանը»: Հանրապետության ղեկավարը նաեւ ջերմ հիշողություններ է պահպանել Վարդանյանի հետ անձնական հանդիպումից. «Գեորգ Վարդանյանի մասին բարի հիշողությունները կպահպանվեն բոլոր այն մարդկանց սրտերում, ովքեր գեթ մեկ անգամ հանդիպել են նրան», ասված է նախագահի ցավակցագրում:

Վարդանյանի մահվան կապակցությամբ ցավակցություն է հայտնել նաեւ Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւը, որը բարձր է գնահատել տեր եւ տիկին Վարդանյանների անձնագոհ նվիրումը սովետական հայրենիքին ու ցավալի կորուստ որակել Գեորգ Վարդանյանի մահը:

Տիկին Գոհար Վարդանյանին՝ Գեորգ Վարդանյանի այրուն, իր ցավակցությունն է հայտնել նաեւ Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ Արա Աբրահամյանը: Նա նշել է. «Գեորգ Վարդանյանի ջանքերը ակնառու են նաեւ Ռուսաստանի եւ Հայաստանի հատուկ ծառայությունների միջեւ գործընկերային հարաբերություններ հաստատելու գործում, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության արտաքին հետախուզության օրգանների կազմավորման մեջ: Մենք բարձր ենք գնահատում Գեորգ Վարդանյանի՝ որպես Հայաստանի հայրենասերի, նվիրված ու ակտիվ մասնակցությունը Ռուսաստանի հայկական համայնքի կյանքին: Լինելով Ռուսաստանի հայերի միության անդամ նա իր բարի խորհուրդներով մեծ վաստակ ունի երիտասարդության դաստիարակման գործում եւ հպարտության օրինակ է ողջ աշխարհի հայության համար: Գեորգ Վարդանյանի մահը անդառնալի կորուստ է ռուս ու հայ ժողովուրդների համար»:

### ՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ ԿՈՐՈՒՍՏ ԿՐԵՑ

82-րդ տարում կյանքից հեռացավ հայ անվանի պատմաբան, հայագետարեւելագետ, ակադեմիկոս **Մանվել Կարապետի Զուլայանը** Մեծ է նրա ներդրումը Հայաստանի, ինչպես նաեւ համաշխարհային պատմության առանցքային շատ





հիմնա-հարցերի ուսումնասիրու-թյան գործում:  
Մանվել Ջուլայանի գիտական հետազոտությունների համակարգված ամբողջացումն էր .Արեւմտյան Հայաստանը 16-18-րդ դարերում մենագրությունը (Երեւան, 1980): 1990 թ. Մ. Ջուլայանը հրատարակեց .Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների (13-18-րդ դդ.)ե հետազոտության առաջին գիրքը, որը նվիրված էր Հայաստանի քաղաքական պատմության հիմնահարցերի համակողմանի լուսաբանման համար օտար հեղինակների կարեւոր դիտարկումների ու հաղորդումների հետազոտմանը:  
Ակադեմիկոս Մ. Ջուլայանը որպէս հեղինակ իր ակտիվ մասնակցությունն է բերել ԳԱ հրատարակած .Հայ ժողովրդի պատմությունն բազմահատորյակի ստեղծման աշխատանքներին:

**ՄԵՐԳԵՑ ԻՄՐԱՅԵԼՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ**

**Մ. ՄԱԿԱՐՅԱՆ**

Տաղանդաշատ օպերատոր, ռեժիսոր, ՀՀ ժողովրդական արտիստ, Պետական մրցանակի դափնեկիր, Մանկավարժական համալսարանի բազմամյա դասախոս, ԹՄՄիության եւ ՀԺԿ վարչությունների անդամ, պրոֆեսոր Մերգեյ Խորենի Իսրայելյանը այս օրերին կնշեր իր ծննդյան 75-ամյակը: Ցավոք նա անսպասելի հեռացավ կյանքից, ու շատ ծրագրեր մնացին անկատար: Մակայն, եւ նրա գործընկերները, եւ ուսանողները, արվեստի ու մշակույթի մարդիկ, երբեք չեն մոռանում այդ չափազանց բարի, համեստ ու մարդամոտ արվեստագետին: Մերգեյ Իսրայելյանի ծննդյան 75-ամյակին նվիրված հուշ-երեկո է կազմակերպել Հայաստանի կինեմատոգրաֆիստների միությունը «Մոսկվա» կինոթատրոնում փետրվարի 11-ին ժամը 15-ին: Երեկոյի ընթացքում տեղի կունենա նաեւ ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ հրատարակված Էդուարդ Համբարձումյանի «Մերգեյ Իսրայելյան վարպետի գործը» գրքի շնորհանդեսը:

**ՍԱՐԱՅԵԼ Է ՆՈՐԱՅՐ ՍՈՒՇԵՂՅԱՆԸ**

Ծանր հիվանդությունից հետո, երեկ 76 տարեկանում մահացել է նախկինում ճանաչված ըմբիշ, ըմբշամարտից հայաստանցի աշխարհի առաջին չեմպիոն եւ գավաթակիր Նորայր Թագվորի Մուշեղյանը:

**Նորայր Թագվորի Մուշեղյան**

(1935 - 2011), ճանաչված հայ ըմբիշ, ըմբշամարտի հայաստանցի աշխարհի առաջին չեմպիոն (1958) և գավաթակիր: 1986-ին հիմնել է «Զորավար Անդրանիկ» համազգային միությունը:Բազում հաղթանակներ է տարել միջազգային մի շարք մրցաշարերում՝ արժանանալով մեդալների, ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետի կոչմանը: 1961-ին նրա պատվին հիմնադրվեց



ըմբշամարտի հանրապետական մարզադպրոցը, որը նա երկար տարիներ ղեկավարում էր:

Նորայր Մուշեղյանին շնորհվել են վաստակավոր մարզչի, ՀՀ ֆիզկուլտուրայի եւ սպորտի վաստակավոր գործչի պատվավոր կոչումներ, եղել է ԽՍՀՄ-ի եւ Աֆղանստանի հավաքականների ավագ մարզիչը: Արժանացել է ԽՍՀՄ «Աշխատանքային կարմիր դրոշի», «Ժողովուրդների բարեկամության» շքանշանների եւ բազմաթիվ այլ պարգևների:

**Արեւմտյան Հայաստան**

**Դիարբեքիում 1915-ին կոտորված հայերի նոր գերեզմանո՞ց են հայտանաբերել**



News.am. 2-2-2012- Դիարբեքիի Սուրիչի շրջանում գտնվող պատմական շենքերից մեկի բակում, որտեղ եղել է բանտ եւ այնուհետ JITEM-ի (Ահաբեկչության դեմ պայքարի ժանդարմերիայի հետախուզություն) շտաբ, վերանորոգման ժամանակ հայտնաբերված մարդկային կմախքների շուրջ խոսակցությունները թեժացել են: Սկզբնական շրջանում հայտարարվեց, թե կմախքները պատկանում են JITEM-ի կողմից 1990-ականներին սպանված քրդերին: Հայտնաբերված կմախքների գործով Դիարբեքիի դատախազությունը հետաքննություն է սկսել, իսկ Դիարբեքիի գլխավոր դատախազի տեղակալ Ահմեդ Քարաջան հայտարարել է, թե կմախքներն ավելի հին: Խնդրի հետ կապված իշխող «Արդարություն եւ զարգացում» կուսակցության պատգամավոր Գալիփ Էնսարոլուն նշել է, թե այդ տարածքում բանտը կառուցվել է 1880-ականներին եւ այդ կմախքներն այդ ժամանակաշրջանի են: Թուրքական Taraf-ի այունակագիր Այհան Աքթարն իր հրապարակման մեջ ներկայացնում է 1915-ին Դիարբեքիում Անգլիայի հյուպատոսությունում թարգմանիչ աշխատած Թոմաս Մկրտչյանի զեկույցը, որում նշվել է, թե այդ բանտում հավաքել են հայերին, ապա կոտորել: Նշվում է, որ Թոմաս Մկրտչյանի զեկույցը, որը գտնվում է ամերիկյան արխիվներում, մանրամասնորեն նկարագրում է Դիարբեքիի կոտորածները: Նշենք, որ JITEM-ի նախկին շտաբի տարածքից արդեն հայտնաբերվել են շուրջ 30 կմախքներ:

**Թուրքական իշխանությունները հայկական գերեզմանոցում ավերածություններ են իրականացրել**

News.am. 4-2-2012- Թուրքիայի Մալաթիայի քաղաքապետարանը քանդել է Մալաթիայի հայերի գերեզմանոցում Մալաթիայի հայերի միության (HAYDER) միջոցներով կառուցվող շինությունը, որը պետք է ծառայեր որպես պահակատուն եւ հոգեհանգստի եւ վայր: Թուրքական CNNturk-ի փոխանցմամբ Մալաթիայի քաղաքապետարանը փետրվարի 2-ին տեխնիկա եւ բանվորներ է ուղարկել հայկական գերեզմանոց, որտեղ հայ համայնքից ոչ ոք չի եղել: Այնուհետ նոր կառուցվող շինությունը հողին են հավասարեցրել: Ստամբուլի հայկական համայնքն ու Մալաթիայի հայերի միության անդամները շուկի մեջ են ընկել իմանալով այս լուրը եւ պարզաբանումներ պահանջել իշխանություններից: Մալաթիայի հայերի միության նախագահ Խոսրով Քյոլեթավիթթօլուն նշել է, թե իրենք շինարարությունը սկսել են թույլտվություն ստանալուց հետո: «Մենք ընդամենը կառուցում էինք գերեզմանոցի համար պահակատուն եւ հանգուցյալների համար հոգեհանգստի վայր: Ամեն ինչ ավիրեցին: Մեր վստահությունն էլ ավիրեցին: Վիրավորված էինք, ավելի վիրավորվեցինք», -ասել է HAYDER-ի նախագահը շեշտելով, որ իրենք ցանկանում են կրկին կառուցել նույն շենքը: Շինությունը քանդած Մալաթիայի քաղաքապետ Ահմեդ Չաքըրը «Ակոս» շաբաթաթերթին տված հարցազրույցում նշել է, թե իրենք նախատեսել էին քանդել միայն պահակակետի տանիքը, որի համար արդեն զգուշացրել էին, սակայն քաղաքապետարանի աշխատակիցները եւ քանդումը իրականացնող բրիգադը իրար ճիշտ չեն հասկացել, որի հետեւանքով քանդվել է ամբողջ կառույցը:

**Դիարբեքիրում մարտի 8-ին ընդառաջ կանայք կատարել են նաեւ հայկական երգեր**



News.am. 25-2-2012-Թուրքիայի Դիարբեքիրի Բաղլարի քաղաքապետարանին կից գործող «Ձնծաղիկ» կանանց մշակույթի տան երգչախումբը Կանանց միջազգային օրվան նվիրված համերգով է հանդես եկել: Firat գործակալության փոխանցմամբ Բաղլարի քաղաքապետարանի կողմից կազմակերպված համերգին 8 հոգուց բաղկացած կանանց երգչախումբը մարտի 8-ին ընդառաջ կատարել է 8 երգ՝ 8 տարբեր լեզուներով, այդ թվում նաեւ հայերենով:

**ՄՓՅՈՒՌՔ**

**ՌԴ-ում ապրում է շուրջ 1 մլն 200 հազար հայ**  
*ՌԴ Պետական վիճակագրության դաշնային ծառայությունը հրապարակել է համառոտական մարդահամարի վերջնական արդյունքները:*

Այդ տվյալների համաձայն ՌԴ-ում ապրում է 1 182 388 հայ, փոխանցում է diaspora-world.info-ն: Տվյալները, սակայն, չի կարելի ամբողջական համարել, քանի որ բնակչության մի մասը հրաժարվել է մասնակցել մարդահամարին, իսկ որոշ մասն էլ մերժել է նշել ազգային պատկանելությունը: Հայերի մեծ մասը ապրում է Հարավային դաշնային շրջանում՝ շուրջ 442 հազար հայ: Իսկ ռուսաստանաբնակ հայերի ամենափոքր հատվածը ապրում է Հեռավորարևելյան դաշնային շրջանում՝ շուրջ 17 հազար մարդ: Իսկ Մոսկվայում ապրում է 106 466 հայ: Նշենք, որ 2002 թվականի մարդահամարի տվյալներով, Ռուսաստանում բնակվում էր 1 130 491 հայ: HayNews.am

**Միջազգային**

**Մենատն ընդունեց Հայոց ցեղասպանության ժխտման քրեականացման օրինագիծը**

*Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծն ընդունվեց նաև Ֆրանսիայի Մենատն կողմից:* Ֆրանսիայի խորհրդարանի վերին պալատը՝ Մենատը, վայրկյաններ առաջ ձայների 127 «կողմ» և «86» դեմ հարաբերակցությամբ ընդունեց ցեղասպանությունների ժխտումը քրեականացնող օրինագիծը: Քննարկումը սկսվել էր 18:00-ին և տևեց մոտ 7,5 ժամ: Հիշեցնենք, որ դեկտեմբերի 22-ին Ֆրանսիայի խորհրդարանի ստորին պալատը՝ Ազգային ժողովն ընդունել էր օրինագիծ, որով նախատեսում էր քրեական պատիժ ցեղասպանությունների ժխտման դեպքում, այդ թվում նաև Հայոց ցեղասպանության փաստը հերքողների համար: Մենատում անցնելուց հետո օրինագիծն այժմ կուղարկվի նախագահ Նիկոլա Սարկոզիի հաստատմանը: Վերջինիս կողմից ստորագրվելուց հետո այն կստանա օրենքի ուժ: Նշենք, որ այդ օրենքով Հայոց ցեղասպանության ժխտման համար 1 տարվա ազատազրկում և 45 հազար եվրո տուգանք է նախատեսվում:

**ՀՀ-ում Իրանի դեսպան. Մինչև 1918թ. Ադրբեջան անունով պետություն չի եղել, այն կազմավորվել է պատմական Արանի տարածքում**

Panorama.am. 24-2-2012- Մինչև 1918թ. Ադրբեջան անունով պետություն չի եղել, այն կազմավորվել է պատմական Արանի տարածքում: Այդ մասին ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում Հայաստանի և Իրանի դիվանագիտական հարաբերությունների 20-ամյակի առթիվ կազմակերպված միջոցառման

ժամանակ հայտարարել է ՀՀ-ում ԻԻՀ դեսպան սեյյեդ Ալի Մադայիանը: Դեսպանը, հանդիպման սկզբում շնորհավորելով դիվանագիտական հարաբերությունների 20-ամյակի առթիվ, նշեց, որ Իրանի և Հայաստանի հարաբերություններն ունեն

հազարամյակների պատմություն, և երկու երկրների նախագահների մակարդակով տեղի ունեցող բարձր մակարդակի



փոխայցերը վկայում են, որ երկկողմ հարաբերությունները դինամիկ կերպով զարգանում են: Խոսելով հայ-իրանական հարաբերությունների մասին, դեսպան Մադայիանը նշեց, որ անցյալ 20 տարիների ընթացքում բազմաթիվ խոշոր ծրագրեր են իրականացվել, որոնցից մատնանշեց Իրան-Հայաստան գազամուղի շինարարությունը: Անդրադառնալով Իրան-Հայաստան երկաթգծի շինարարությանը՝ դեսպանը նշեց, որ ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադի՝ վերջերս Երևան կատարած այցելության ժամանակ, ի թիվս այլ հարցերի, անդրադարձ է եղել նաև երկաթգծի շինարարության թեմային, մինևույն ժամանակ, ընդգծեց, որ իրանական կողմը պատրաստ է երկաթգծի շինարարությունն իրականացնել մինչև Իրան-Հայաստան սահմանը, հավելելով, որ իրանական ընկերությունները ևս շահագրգռված են երկաթգծի շինարարությունն իրականացնել նաև Հայաստանի տարածքում: Ի պատասխան Լեռնային Ղարաբաղի հակամարտությանն առնչվող հարցին, դեսպանը, նախ զգուշացրեց, որ հակամարտությանը չպետք է կրոնական երանգ տալ: Անդրադառնալով Հայոց ցեղասպանության թեմային՝ դեսպանը նշեց, որ ամեն տարի ապրիլի 24-ին ծաղկեպսակ է դնում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին կառուցված հուշահամալիրում: Պատասխանելով Ադրբեջանում ապրող ազգային փոքրամասնությունների՝ թալիշներին, թաթերին, լեզգիներին, առնչվող հարցին, Իրանի դեսպանը նշեց, որ ի տարբերություն Իրանում ապրող թալիշների, ադրբեջանաբնակ թալիշները վատ վերաբերմունքի են արժանանում:

**ՎԱՂԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ ՄՈՍԿՎԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓՈՒՔԱՂԱՔԱՊԵՏ**

Ռ-Վ Պետրոսյանի օրերս կայացած ընտրություններով պատգամավոր ընտրված Մոսկվայի քաղաքապետի սոցիալական քաղաքականության հարցերով տեղակալ Լյուդմիլա Շվեցկովան, քաղաքապետարանի մամուլի ծառայության ներկայացուցչի տեղեկացմամբ՝ հաստատել է, որ իմքը տեղափոխվում է Դ-ումա՝ օրենսդիր աշխատանքի: Իսկ Ռ-Վ մայրաքաղաքի փոխքաղաքապետի պաշտոնում Շվեցկովային, «ՌԻԱ Նովոստի»-ի տեղեկացմամբ՝ կփոխարինի քաղաքապետարանի բնակչության սոցիալական ապահովության բաժնի ղեկավար Վլադիմիր Պետրոսյանը:


**Ի. Կորոտչենկո. Պատերազմի դեպքում Իրանը կհարվածի Կասպից ծովում Ադրբեջանի հանքահորերին**



Panorama.am. 18-1-2012- Ռուսաստանի պաշտպանության նախարարությանը կից Հասարակական խորհրդի անդամ, «Ազգային պաշտպանություն» հանդեսի գլխավոր խմբագիր Իգոր Կորոտչենկոն հայտարարել է, որ Իրանի դեմ պատերազմ սկսվելու դեպքում Թեհրանը կհարվածի Կասպից ծովում Ադրբեջանի հանքահորերին: Այս մասին հայտնում է «Ազադիլիզ» թերթը: Նրա խոսքով, Իրանի հետ պատերազմ սկսվելու դեպքում, Ադրբեջանի հիմնական պարտականությունը Կասպից ծովում իր նավթի և գազի հանքահորերի պաշտպանությունը կլինի: «Ադրբեջանը ռուսաստանյան արտադրության S-300 հակահրթիռային պաշտպանության համակարգերը գնել է հենց այդ նպատակով, քանի որ պատերազմ սկսվելու դեպքում Իրանն առաջինը հարվածելու է իրեն ոչ բարեկամ երկրներին: Այդ ժամանակ Ադրբեջանը պետք է իր գործողությունները կոորդինացնի Թուրքիայի հետ և նրա հետ միասին մինևույն դիրքորոշումը որդեգրի: Ռազմական հակամարտություն ստեղծվելու դեպքում Թուրքիան նույնիսկ կարող է օգնել Ադրբեջանին՝ այդտեղ բերելով իր «Patriot» ռազմականակարգերը:

**Հասարակական**

**Անդրանիկ Զորավարի ծննդյան օրը**



Անդրանիկ Թորոսի Օզանյանը ծնվել է 1865 թ. փետրվարի 25-ին Արևմտյան Հայաստանի Շապին Գարահիսար քաղաքում:

Տեղի Մուշեղյան վարժարանն ավարտելուց 1 տարի անց բանտարկվում է հայ բնակչությանը ահաբեկող ժանդարմին ծեծի ենթարկելու համար: Բանտից հաջող փախուստ իրականացնելով Անդրանիկը տեղափոխվում է Կոստանդնուպոլիս, բայց շուտով վերադառնում է Արևմտյան Հայաստան, իսկ հետո էլ ուղևորվում է Ղրիմ ու Կովկաս՝ հայկական մարտական ջոկատներին զենք

հասցնելու համար: Արևմտյան Հայաստանում Անդրանիկը մտնում է հայտնի ֆիդայի Սերոբ Վարդանյանի (Աղբյուր Սերոբ) պարտիզանական ջոկատը և դառնում թուրքական ջարդարանների ու կանոնավոր բանակային զորամասերի դեմ պայքար մղող մի քանի պարտիզանական խմբերի ճանաչված ղեկավարը: Գլխավորել է Սերոբին սպանող Բշարե Խալիլի սպանությունը, 1901 թ. Առաքելոց վանքի կռիվները: 1902-1904 թթ. Անդրանիկի ջոկատները թուրքերի և քուրդ մահմեդականների դեմ մարտեր էին մղում Մասունում, Տարոնում և Վասպուրականում: 1905 թ.-ին Անդրանիկն անցավ Կովկաս, որտեղ հայկական ազգային շարժման երևելի գործիչների հետ քննարկում էր օսմանյան լծի դեմ հետագա պայքարի հարցերը: Դրանից հետո Անդրանիկը մեկնեց երկարատև ճանապարհորդության, որի ընթացքում այցելեց Ֆրանսիա, Շվեյցարիա, Բելգիա, Անգլիա, Բուլղարիա և Իրան հանրությանը տեղեկացնելով Արևմտահայաստանի հայերի ազգային-ազատագրական պայքարի ու դրա հետ կապված զենքի ձեռք բերման անհրաժեշտության մասին: Բուլղարիայում Անդրանիկն գրեց իր «Մարտական հրահանգները»՝ ընդհանրացնելով պարտիզանական պայքարի փորձը: Հետագայում այդ փորձը լավ ծառայեց բուլղարացիներին՝ Առաջին Բալկանյան պատերազմի ժամանակ: 1912-ին Անդրանիկը հայ կամավորներից կազմակերպեց վաշտ, որը մտավ բուլղարական բանակի աշխարհագրորի կազմի մեջ: Հայ ռազմիկները հերոսություն ցուցաբերեցին Միսթանլի, Ուզուն, Մերեֆտե, Շար-Կիո և այլ քաղաքների համար մղված մարտերում: Անդրանիկը մասնակցում էր գեներալ Յավեր փաշայի թուրքական կորպուսի ջախջախմանը: Բուլղարական հրամանատարությունը բարձր գնահատեց հայկական վաշտի մասնակցությունը Առաջին Բալկանյան պատերազմին:

Առաջին Աշխարհամարտը սկսվելուն պես Անդրանիկը շտապում է Կովկաս: 1914 թ. օգոստոսի 12-ին Թիֆլիսում նա հանդիպում է Կովկասյան ռազմական շրջանի զորքերի գերագույն հրամանատար Միշլանսկուն ու հայտնում է Թուրքիայի դեմ պատերազմին մասնակցելու պատրաստակամության մասին: Անդրանիկին հանձնարարվեց ձևավորել և գլխավորել առաջին հայկական կամավորական գունդը: Այդ գնդին գլուխ կանգնած՝ Անդրանիկը անհավասար մարտեր է մղում թուրքական զորքերի դեմ ու հեղինակություն է նվաճում ռուսական ռազմական հրամանատարության շրջանում: Գեներալ-լեյտենանտ Չերնոզուբովը, մասնավորապես, գրում էր. «Ես միշտ հանձինս Անդրանիկի տեսնում էի ջերմ հայրենասերին, Հայաստանի ազատության մարտիկին, որ խորապես սիրում է իր Հայրենիքը: Ես առանձնակի հաճույքով էի միշտ կարդում ռուսերեն թարգմանությամբ քաղվածքները հայկական թերթերի հոդվածներին, որտեղ Անդրանիկին հարգանք էր մատուցվում իբրև ազգային հերոսի, որն իր գլուխը միշտ քաջաբար պահեց Հայաստանի դարավոր թշնամու դեմ պայքարում ազգային իդեալները իրագործելու համար»: Մյուս, ոչ պակաս հայտնի ռուս զորավար Յուլենիչը Անդրանիկի մասին ասաց, որ նա «խենթի պես քաջ է»: 1915-1916 թթ. Կովկասյան ճակատի մարտերում ցուցաբերած անձնական արիության և հայկական գնդի հաջողությունների համար Մասունցի Անդրանիկը պարգևատրվեց Գեորգիյան 4-րդ աստիճանի մեդալով, Գեորգիյան 4-րդ և 3-րդ աստիճանի խաչերով, Սբ. Ստանիսլավի 2-րդ աստիճանի սրի և Սբ. Վլադիմիրի 4-րդ

աստիճանի շքանշաններով: Գունդը Անդրանիկի գլխավորությամբ քաջաբար մասնակցեց Մուղանջուրի (Դիլման) տակ մղված մարտին՝ 1915 թ. ապրիլի 15-18-ին, որում Կովկասը փրկվեց թշնամու ներխուժումից: 1918 թ. հունվարի 30-ին թուրքական զորքերը, Մեհմեդ Վեհիբ փաշայի հրամանատարությամբ, Էրզրումի, Վանի և Մերձծովյան ուղղություններով անցան մեծամասշտաբ գործողությունների, հունվարի 30-ին նրանք գրավեցին Երզնկան, փետրվարի 11-ին՝ Տրապիզոնը, ապրիլի 14-ին առանց կռվի մտան Բաթում և սկսեցին շարժվել դեպի Սուխում: Ապրիլի 25-ին ընկավ Կարսը, մայիսի 15-ին՝ Ալեքսանդրապոլը:

Անդրանիկի գունդը գրկվել էր մասնրելու հնարավորությունից, որովհետև վարելով ծանր պաշտպանական մարտեր Էրզրումի ուղղությամբ, ծածկում էր 1915 թ. փրկված հարյուր հազարավոր հայ, հույն ու սաորի գաղթականների նահանջը, որոնց վրա ռուսների նահանջից հետո նորից սարսափելի վտանգ էր կախված: Թուրքիայի կողմից Կովկասի մեծ մասի զավթման ու Արևելյան Հայաստանում ցեղասպանության կրկնության վտանգը թվում էր գրեթե անխուսափելի: Դուք Անդրանիկ զուգվել Մակայն 1918 թ. մայիսի 16-18-ին Վորոնոցկա ավանի մոտակայքում գեներալ-մայորի կոչման արժանացած Անդրանիկի դիվիզիան անպատմելի ջանքերով զսպեց օսմանյան զորքերին և նրանց արբանյակներին: Ու չնայած թշնամու որոշ խմբերի հաջողվեց մինչև 20-25 կմ մոտենալ Թիֆլիսին, նրանց հիմնական գանգվածը կանգնեցվեց և ետ շարտվեց: Թշնամուց նախաձեռնությունը վերցնելով՝ զորավարը մարտեր է մղում Ղարաբիլիսայի ուղղությամբ: 1918 թ. մայիսի 25-28-ին ծավալված Լոռու ճակատամարտում, որ մեծապես ճակատագրական եղավ ոչ միայն Հայաստանի համար, այլև ամբողջ Կովկասի, Անդրանիկը վիժեցրեց Դիլիջանի ուղղությամբ թուրքական զորքերի գլխավոր հարձակումը, որոնք ջանում էին Դիլիջանով դուրս գալ դեպի Բաքու: Կրած պարտության հետևանքով թուրքական հրամանատարությունը ստիպված եղավ Լեռնային Լոռու մարզի մեծ մասը թողնելու հրաման տալ: 1918 թ. հունիսի սկզբին հայկական դիվիզիան մտավ Նոր-Բայազետ, այնուհետև Սելիմի լեռնանցքից Դարալազյա-Շարուրով դեպի Նախիջևան: Շուտով զբաղեցվեցին Ջուլֆան և Բիթլիսը: Հունիսի 14-ին Անդրանիկը հրաման տվեց, որում նշվում էր, թե իր զորքերը ենթարկվում են կենտրոնական Ռուսական կառավարությանը, իսկ Նախիջևանը հայտարարվում էր Ռուսաստանի անբաժանելի մասը: Ջորավար Անդրանիկը նաև հեռագիր ուղարկեց Կովկասի հարցերով արտակարգ կոմիսար և Բաքվի Սովնարկոմի նախագահ Շահումյանին, որում պատրաստակամություն հայտնեց օգնություն ցուցաբերելու Բաքվի վրա հարձակվող թուրքական զորքերից պաշտպանվող Բաքվի կոմունային: Դեռևս 1918 թ. ամռանը թուրքական զորքերը բռնագրավեցին պարսկական տարածքի հյուսիսային մասը դեպի Բաքու առաջխաղացումը ծավալելու համար հենադաշտ ստեղծելով: Գրավելով, մասնավորապես, Մակու, Մալմաստ, Թավրիզ, Սերաբ, Արդաբիլ և Խոյ իրանական քաղաքները, թուրքերը մտադրված էին Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգծի միջոցով նոր զորքեր անցկացնել Պարսկաստան Բաքվի վրա հարձակվելու համար: Բայց Նախիջևանում Անդրանիկի ջոկատները, կտրեցին երկաթուղային ճանապարհը, իսկ Ջուլֆայում՝ գրավեցին թուրքական կայազորը: Խոյի շրջանում հայկական կամավորամասերը անպատմելի հարված հասցրին Հյուսիսարևմտյան Իրանում տեղաբաշխված թուրքական բանակին, ինչը ստիպեց թուրքերին կանգնեցնել հարձակումը Բաքվի վրա և Անդրանիկի դեմ ուղարկել նշանակալի ուժեր: Խոյում մարտերը տևեցին մի քանի օր: Թուրքերը կրեցին մեծ կորուստներ, սակայն անընդհատ ժամանող լրացուցիչ ուժերը հայկական դիվիզիայի համար գրավման վտանգ առջ բերին: Այդ պայմաններում Անդրանիկը ստիպված եղավ թողնել Խոյը, և, ճեղքելով շրջափակման օղակը, նահանջել Ջուլֆա-Բաքվի շրջանը: Այնուհետև, թվով գերակշիռ թուրքական զորքերի ճնշմամբ՝ զորավար Անդրանիկը ստիպված եղավ թողնել



Նախիջևանը ու անցնել Լեռնային Չանգեզուր՝ նպատակ ունենալով Լեռնային Ղարաբաղի միջոցով ճեղքել-հասնել Բաքու և փակել նահանջող թուրքական բանակի ճանապարհը: Անդրանիկը վիթխարի դեր խաղաց Չանգեզուրի պաշտպանությունում: Մարտերի ընթացքում թուրքական զորքերի մինչև 40 տոկոսը ուղղվեց Չանգեզուր՝ Անդրանիկի դեմ: Երբ նորակազմ կովկասյան հանրապետությունների ղեկավարները, դեռևս 1918 թ. հունվարին դիմեցին թուրքական կառավարությանը՝ պատրաստակամություն հայտնելով նստել բանակցությունների սեղանի շուրջ, ի պատասխան լսեցին, որ Թուրքիային իրենց կարծիքը չի հետաքրքրում, նրան հուզում է միայն այն, թե այդ առիթով ինչ է մտածում զորավար Անդրանիկը, ինչը լիովին տրամաբանական էր, քանզի հենց Անդրանիկի զորքերն էին մնում թուրքերի կողմից Կովկասի գրավման հիմնական խոչընդոտը: Բախվելով Անտանտի դաշնակիցների, Հայաստանի հանրապետության որոշ ղեկավարների և բոլշևիկների դավաճանությանը, զորավարը ստիպված եղավ հեռանալ արտասահման: Ճանապարհին, երբ նա անցնում էր Թիֆլիսով, ասաց. «Ես իմ կյանքում երբեք չեմ ձգտել անձնական երջանկության ու բարօրության: Ես մշտապես ձգտել եմ միայն մի բանի և պայքարել եմ միայն մի բանի՝ իմ հարազատ ժողովրդի ազատության և բարեկեցության համար: Ես չեմ փնտրում իմ վաստակի գնահատականը և ցանկանում եմ միայն այն, որ երջանիկ լինի այն ժողովուրդը, որին ես ծառայում եմ ամբողջ կյանքում»: Այդ ծառայությունն Անդրանիկը շարունակեց նաև տարագրության մեջ: 1919 թ. դեկտեմբերին «Վաշինգտոն Փոսթ» ամերիկյան թերթը գրում էր. «Զորավար Անդրանիկը կանգնած է հայկական հերոսականության գագաթին: Հայերն ամենուր նրան ցնծությամբ են դիմավորում: Նրանք մեծ ուշադրությամբ ու հիացմունքով են ունկնդրում նրա յուրաքանչյուր խոսքը: Իսկ նա այդ զինվորը, որը ցարական Ռուսաստանի կործանումից հետո անհավասար մարտեր էր վարում թուրքական բանակի դեմ, ունի ասելիք: Այժմ նրա խոսքերը նույնքան հատու են, որքան նրա սուրբը»: Անդրանիկը մահացավ 1927 թ. օգոստոսի 30/31-ին, Չիքո (Մակրամենտոյի մոտ) քաղաքի Ռիչարդսոն Սփրինգս հանքային ջրերի առողջարանային համալիրում՝ սրտի կաթվածից (ՄՄՆ) և սեպտեմբերին թաղվեց Ֆրեզնոյի «Արարատ» գերեզմանատանը: 1928 թ. հունվարին նրա աճյունը փոխադրվեց Փարիզ և վերաթաղվեց Պեր-Լաշեզ գերեզմանոցում, իսկ տարիներ անց (2000) այն տեղափոխվեց Հայրենիք Երևանի Եռաբլուր պանթեոն: Անդրանիկի անունով են կոչվում հրապարակներ, փողոցներ, դպրոցներ, նրա պատվին տեղադրված են արձաններ և հուշատախտակներ աշխարհի մի շարք երկրներում (Հայաստան, Բուլղարիա, Ֆրանսիա, Ռումինիա): Նրան են նվիրված մեծ թվով ժողովրդական ստեղծագործություններ, գրքեր և հոդվածներ տարբեր լեզուներով:

**«Խոջալուն» պաշտոնական Բաքվի շահարկումների քաղաքական կապիտալն է**

Ադրբեջանում սկսվել է ավանդական հակահայկական քարոզարշավը՝ կապված Խոջալու բնակավայրի /գյուղ ԼՂՀ տարածքում, 1992թ դեպքերի հետ, երբ վերջինս 1988-90թթ. Ադր.ԽՍՀ-ի կողմից ակտիվորեն բնակեցվում էր, մասնավորապես, Ուզբեկստանի Ֆերգանայի հովտի թուրք-մեսխեթներով: Ընդամենը, պաշտոնական քարոզչությունը չի խորշում ոչ մի միջոցից, նպատակ ունենալով հայկական կողմին ի ցույց դնել որպես ողբերգության մեղավոր և համաշխարհային հանրության գիտակցությանը և սեփական ժողովրդի կարծիքին ներարկել հայատյացության թույնի մի նոր չափաբաժին:

1992թ. փետրվարի 25-26-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իշխանությունները կազմակերպեցին մարտական գործողություն՝ նպատակ ունենալով ապաշրջափակել Խոջալու բնակավայրի մոտակա օդանավակայանը և

վնասազերծել հակառակորդի՝ հենց Խոջալույում գտնվող կրակակետերը, որտեղից 1991թ. գարնանից ի վեր ԼՂՀ բնակավայրերը ադրբեջանական օսօնականների կողմից պարբերաբար ենթարկվում էին հարձակումների, «Ալազան» և «Կրիստալ» տեսակի կայանքների և «Գրադ» տեսակի ռեակտիվ համազարկային կայանքի կանոնավոր հրետակոծումների: Նախքան Խոջալուի կրակակետերի ոչնչացումը սպանվել էին ավելի քան 20 հայագրի խաղաղ բնակիչներ, մոտակա կոլտնտեսային և անհատական հողատարածքներից առևանգվել՝ հարյուրավոր մարդիկ, քվել՝ հազարավոր գլուխ խոշոր և փոքր էղջերավոր անասուններ:

Շարունակվող շրջափակման, մեծ թվով փախստականների, վառելիքի բացակայության, ձեռնարկությունների հարկադիր պարապտրդի, միջըրջանային ճանապարհների պաշարման և այլ պատճառներով ԼՂՀ-ում, և մասնավորապես, մայրաքաղաք Ստեփանակերտում ստեղծված իրավիճակը գնալով՝ ավելի էր վատթարանում, սպառվել էին սննդամթերքը, դեղորայքը, վառելիքը, որի հետևանքով օդանավակայանի ապաշրջափակումը և Խոջալույում հակառակորդի կրակակետերի վնասազերծումը հույժ կարևոր քայլ էր Լեռնային Ղարաբաղի բնակչության ֆիզիկական գոյատևման համար, որին Ադրբեջանը փորձում էր դատապարտել կործանման:

Խոջալուի ռազմական բազայի չեղոքացման անհրաժեշտությունը, մասնավորապես, թելադրված էր այնտեղ կենդանի ուժի և հարձակողական զենքի կենտրոնացման փաստով: Ադրբեջանի իշխանությունները Խոջալու էին տեղափոխել ՕՍՕՆ-ի բազմաքանակ ստորաբաժանումներ, բացի դրանից Խոջալույում հաստատվել էին Ադրբեջանի Ազգային ճակատի մարտիկները: ԼՂՀ ղեկավարությունը պարտավոր էր կասեցնել Ադրբեջանի զինված ուժերի կողմից պատրաստվող՝ հայկական Ասկերան շրջկենտրոնի, այնուհետև՝ Ստեփանակերտի գրոհի գործողությունը:

Խոջալուի ազատագրման և օդանավակայանի ապաշրջափակման մարտական գործողությունը սկսվեց 1992թ. փետրվարի 25-ին, ժամը 23:30-ին և ավարտվեց փետրվարի 26-ին, ժամը 3-ին: ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի ստորաբաժանումները խաղաղ բնակչության համար թողեցին միջանք՝ մարտական գործողությունների գոտուց անվտանգ հեռանալու համար, ինչի մասին ադրբեջանական կողմը նախօրոք զգուշացվել էր: Միջանցքը ձգվում էր Խոջալուի արևելյան ծայրամասից դեպի հյուսիս-արևելք, Կարկառ գետի հունի երկայնքով և քաղաքի հյուսիսային ծայրամասից դեպի հյուսիս-արևելք: Մակայն ադրբեջանական իշխանությունները ոչինչ չձեռնարկեցին մարտական գործողությունների գոտուց խաղաղ բնակչությանը տարհանելու համար:

Խոջալուի մարտական գործողության ընթացքում ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը ազատեցին 13 հայ ռազմագերի, այդ թվում՝ 1 երեխա և 6 կին, որպես ռազմավար վերցրին 2 «Գրադ» MM-21 տեսակի ռեակտիվ համազարկային կայանք, «Ալազան» տեսակի 4 կայանք, մեկ 100մմ հատրից և 3 միավոր գրահատենիսիկա: ԼՂՀ «Արցախ» փրկարարական ծառայությունը Խոջալույում և նրա մերձակայքում հայտնաբերեց խաղաղ բնակիչների 11 դի: Տարածքը, ուր հետագայում նկարահանվել էին կադրեր՝ բազմաթիվ սպանվածների մարմիններով, գտնվում է Ադդամ քաղաքից 3կմ և Խոջալուից 11կմ հեռավորության վրա, և մինչև ընդհուպ 1993թ. ամռանը Ադդամի անկումը, գտնվում էր ադրբեջանական կազմավորումների մշտական վերահսկողության տակ, ինչը բացառում է այնտեղ դարաբաղյան բանակի ստորաբաժանումների մուտքը:

ԼՂՀ իշխանությունները Խոջալուի կրակակետերի ճնշմանն ուղղված գործողության նախապատրաստման մասին

նախօրոք, դեռևս 2 ամիս առաջ տեղեկացրել էին ադրբեջանական կողմին, ինչը բազում անգամ հաստատվել էր նաև Ադրբեջանի պաշտոնական անձանց կողմից, մասնավորապես, այն ժամանակ նախագահ **Այազ Մուխալիբովի** կողմից: Սակայն խաղաղ բնակիչների շարասյունը, ինչպես վերը նշվել է, գնդակահարվել էր Ադղամի մատույցներում, ԼՂՀ և Ադրբեջանի Ադղամի շրջանի միջև ընկած սահմանին, ինչն ավելի ուշ հաստատել է Մուխալիբովը՝ այդ հանցավոր ակտը կապելով իրեն իշխանությունից հեռացնելուն ուղղված՝ ընդդիմության փորձերի հետ, տեղի ունեցածի համար ամբողջ պատասխանատվությունը դնելով նրա վրա:

Հետագայում տարածվեցին ադրբեջանցի օպերատոր **Չինգիզ Մուստաֆանի** կողմից նկարահանված կադրեր, ում նաև թույլատրել էին մուտք գործել հայ և ադրբեջանցի զոհված անձանց փոխանակման վայր: Հայտնի է, որ Մուստաֆանը նկարահանումները իրականացրել է երկու անգամ՝ երկու օրվա տարբերությամբ: Ֆիլմից երևում է, որ երկրորդ նկարահանման ժամանակ որոշ դիակներ այլանդակվել էին:

1992թ. մարտի 2-ին զանգվածային սպանությունների վայր կատարած երկրորդ թռիչքի ժամանակ լրագրողները նկատել էին, որ գետնին գտնվող դիակների դիրքը և նրանց վնասվածքների ու վերքերի աստիճանը, առաջին գնման հետ համեմատած, ապշեցուցիչ կերպով փոփոխվել է: Եվ դա այն տարածքում, որը մինչ 1993թ. ամառը ամբողջությամբ վերահսկվում էր Ադրբեջանի Ազգային ճակատի կողմից: Հենց այս փաստն են ջանադրաբար թաքցնում ադրբեջանական քարոզիչները: Միանգամայն ակնհայտ է, որ մարմինների դիրքը փոփոխվել էր կատարվածի ամբողջ մեղքը հայկական կողմի վրա բարդելու նպատակով, ստեղծելով այն բանի տեսլականը, թե խոջալուեցիները սպանվել են հայկական կողմից արձակված կրակոցներից:

Տվյալ հանգամանքը այնքան էր ապշեցրել Մուստաֆանին, որ նա դրա մասին անձամբ տեղեկացրել է անձամբ նախագահ Մուխալիբովին, որն այդ ժամանակ արդեն ակնհայտորեն կրահում էր ողբերգության պատճառները: Մուխալիբովը պատասխանեց հիրավի մարզարեական խոսքերով. «Չինգիզ, ոչ մեկին ոչ մի բառ չասես այն մասին, թե նկատել ես, որ ինչ-որ բան այն չէ: Հակառակ դեպքում քեզ կսպանեն»:

Կասկածելով, թե կատարվածը հայկական կողմի ձեռքի գործն է, Մուստաֆանը սկսեց անկախ հետաքննություն: Սակայն Մոսկվայի «ДР-Пресс» տեղեկատվական գործակալությանը խոջալուեցիների դեմ տեղի ունեցած հանցանքներին ադրբեջանական կողմի հնարավոր մասնակցության մասին իր տված տեղեկատվությունից հետո, լրագրողը սպանվեց Ադղամից ոչ հեռու, չպարզված հանգամանքներում:

Ի դեպ, նույն ճակատագրին արժանացավ նաև դաշտային հրամանատար **Ալա Յակուբը**, որը անգգուշություն էր ունեցել հայտարարելու, թե «... ինքը կարող էր լույս սփռել Նախիջևանիկի մոտ /Մոջալուի մերձակա հայկական գյուղ/ տեղի ունեցած սպանույի վրա, ինչպես նաև, էական մանրամասներ հայտնել պետական գործիչներին տեղափոխող ուղղաթիռի՝ վերջերս Ղարաբաղի օդային տարածքում կործանվելու մասին», որի պատճառով էլ 1993թ. ամռանը իշխանության եկած Ադրբեջանի Ազգային ճակատը ձեռքազրկեց նրան և բանտախցում մահվան հասցրեց...

Չէիս լրագրող **Յանա Մազալովան**, որը ադրբեջանցիների անուշադրության հետևանքով հայտնվել էր մամուլի ներկայացուցիչների երկու խմբերում էլ, որոնց ցուցադրել էին «հայերի կողմից սրբապղծված դիակները», նկատեց վերջիններիս վիճակի էական տարբերություններ:

Իրադարձություններից անմիջապես հետո լինելով տեղում՝ Մազալովան դիակների վրա ոչ մի վայրագության հետքեր չէր տեսել: Բսկ ահա երկու օր անց լրագրողներին ցուցադրվեցին արդեն նկարահանումների համար «պատրաստած»՝ այլանդակված մարմինները:

Խոջալուի կրակակետերի ճնշման մարտական գործողության որոշ մանրամասնություններ առ այսօր պատված են մթության քողով, ինչն էլ ակտիվորեն շահարկում է պաշտոնական Բաքուն՝ իր քաղաքական նպատակներին հասնելու համար: Ղարաբաղյան հիմնախնդրի համատեքստում «Խոջալուի» թեման շարունակում է մնալ ադրբեջանցիների ներքին և արտաքին տեղեկատվական, ավելի ճիշտ, ապատեղեկատվական քաղաքականության անկյունաքարերից մեկը: Այնինչ Խոջալուի իրադարձությունների շուրջ ադրբեջանական որոշ բարձրաստիճան պաշտոնյաների, իրավապաշտպանների, լրագրողների և հենց Խոջալուի բնակիչների կողմից արված արտահայտություններն ու գնահատականները ամբողջովին հերքում են Բաքվի ստահող վարկածները:

Այսպես, ադրբեջանցի իրավապաշտպան **Արիֆ Յունուսովը** գրում է. «Քաղաքը և նրա բնակիչները գիտակցաբար զոհ են մատուցվել քաղաքական նպատակին» (ադրբեջանական «Ձերկալը» թերթ, 1992թ. հուլիս):

**Թամերյան Կարակը**, որը ժամանակին Ադրբեջանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահն էր, վկայում է. «Ողբերգությունն իրականացրել են Ադրբեջանի իշխանությունները», կոնկրետ՝ «<վերևում նստածներից մեկը» (ադրբեջանական «Մուխալիֆաթ» թերթ, 1992թ. ապրիլի 28):

Ինքը՝ **Հեյդար Ալիևն** է խոստովանել, որ Խոջալուի դեպքերի «մեղավորը նաև Ադրբեջանի նախկին ղեկավարությունն է»: Դեռևս 1992թ. ապրիլին նա, համաձայն «Բիլիք-Դունյասը» գործակալության հաղորդագրության, արտահայտեց ցինիզմի հրեշավոր մի միտք. «Արյունահեղությունը մեր օգտին է լինելու: Մեզ պետք չէ միջամտել դեպքերի ընթացքին»:

Ավելի ուշ, երբ արդեն իշխանության ղեկին էին Ազգային ճակատի ներկայացուցիչները, իր ձեռքակալությունից քիչ առաջ Ադրբեջանի նախկին ազգային անվտանգության նախարար **Վազիֆ Հուսեյնովը**, ակնարկելով Բաքվի ԱԱԸ-ի որոշ քաղաքական գործիչների, հայտարարեց, որ «1992թ. Բաքվի հունվարյան իրադարձությունները և Խոջալուի իրադարձությունները միևնույն մարդկանց ձեռքի գործն են»:

Վերը շարադրված փաստերը միանշանակ վկայում են այն մասին, որ Խոջալուի խաղաղ բնակիչների մահվան մեջ մեղավորը ադրբեջանական կողմն է, որը հրեշավոր հանցանք է գործել սեփական ժողովրդի հանդեպ՝ քաղաքական ինտրիգների պատճառով և հանուն իշխանական պայքարի:

Հատկանշական է, որ տարեցտարի աճում է ադրբեջանական կողմից հայտարարվող՝ զոհերի թիվը: Խոջալուի կրակակետերի ճնշումից մի քանի օր անց ադրբեջանական պաշտոնատար անձինք հայտնեցին զոհվածների թիվը՝ 100 սպանված, մեկ շաբաթ անց՝ 1234. խորհրդարանական հանձնաժողովը «ճշգրտեց» այն՝ 450. Հեյդար Ալիևի կողմից արձակված՝ «ադրբեջանցիների ցեղասպանություն» վերաբերյալ հրամանագրում արդեն խոսվում էր հազարավոր սպանվածների մասին:

Այնինչ, Խոջալուի գործողության իրականացման պահին այդքան խաղաղ բնակիչներ այնտեղ չեն եղել, ինչը, ի դեպ, հավաստում են նաև ադրբեջանական պաշտոնական աղբյուրները: Խոջալուի մոտավորապես 2-2.5 հազար բնակիչների, այսինքն նրանց, ովքեր իրականում ապրում էին բնակավայրում, այլ ոչ թե գրանցված էին այնտեղ՝ վերջինիս քաղաքի կարգավիճակ տալու նպատակով ծավալված հախուռն

շինարարության ընթացքում, մեծ մասը լքել էին բնակավայրը նախօրոք:

Այսպես, 1993թ. ապրիլի վերջին Պրահայում ԵԱՀԽ համաժողովում ԱՀ ԱԳՆ կողմից տարածվեց թիվ 249 փաստաթուղթը, որը կոչվում էր «Ղարաբաղի վերին հատվածում գտնվող և հայկական զինված ուժերի կողմից գրավված աղբբեջանաբնակ և խառը գյուղերի ցուցակ»: Այդ փաստաթղթի «Խոջալու» անվանման դիմաց գտնվող «բնակչություն» սյունակում նշված էր 855 թիվը:

1992թ. մարտի առաջին տասնօրյակում աղբբեջանցի լրագրողներ Իյա Բալխաստովան և Վուգար Խալիլովը «Մեմորիա» իրավապաշտպան կենտրոնի գրասենյակ բերեցին խոջալուեցիների մահվան վայրի նկարահանումների մի տեսաերիզ, որը բարձրագույն հեռուստալրագրողներ էին պատրաստել անմիջապես դաշտի վերևում պտտվող ռազմական ուղղաթիռից: Փաստացի գրասենյակում բոլոր գտնվողները համաձայնվեցին, որ տեսաերիզում պատկերված զոհերի թիվը չի գերազանցում 50-60 հոգուց:

Հարկ է նաև նշել, որ ԼՂՀ արտաքին գործերի նախարարության կողմից մերկացվել է աղբբեջանական մի շարք կայքերում, այդ թվում՝ Աղբբեջանում հարգված «Հեղաբ Այիկի հիմնադրամի» կայքէջում դրված կեղծ լուսանկարը, որն իբր թե վկայում է Խոջալույում աղբբեջանցիների զանգվածային սպանությունների մասին: Իրականում սակայն լուսանկարը անմիջական կապ ունի Կոստովյի իրադարձությունների հետ: Բանից անտեղյակ մարդկանց մոլորության մեջ գցելու նպատակով աղբբեջանական քարոզչության կողմից օգտագործվում են նաև այլ բացահայտ կեղծիքներ, մասնավորապես, Թուրքիայում քրդական ջարդերի զոհերի լուսանկարներ:

Իր հրաժարականից մեկ ամիս անց **Մութալիբովը** չէիս լրագրող **Դանա Մազարովային** տվեց հարցազրույց, որը հրապարակվեց «Նեզավիսիմայա գազետա» թերթում: Խոսելով Խոջալուի մասին, Մութալիբովը նշեց, «Ինչպես պատում են այն խոջալուեցիները, ովքեր փրկվել են, այդ ամենը կազմակերպվել էր նրա համար, որպեսզի պատճառ լիներ իմ հրաժարականի համար: Ինչ-որ ուժ էր գործում նախագահին վարկաբեկելու համար: Ես չեմ կարծում, թե հայերը, ովքեր շատ հստակ և բանիմացությամբ են վերաբերվում նման իրավիճակներին, կարող էին թույլ տալ, որ աղբբեջանցիները ձեռք բերեն նրանց ֆաշիստական գործողությունների մեջ մերկացնող փաստաթղթեր... Դատողությունների ընդհանուր շղթան այն է, որ միջանցքը, որով մարդիկ կարող էին հեռանալ, հայերի կողմից այնուամենայնիվ թողնվել էր: Այդ դեպքում նրանց ինչի ն էր պետք կրակել: Մասնավորապես, Աղդամին հարող տարածքում, որտեղ այն ժամանակ կային բավականաչափ ուժեր, որպեսզի դուրս գային և օգնեին մարդկանց»:

Գրեթե 10 տարի անց Աղբբեջանի նախկին նախագահը հաստատեց իր միտքը «Նովոյե վրեմյա» թերթին տված հարցազրույցում. «Ալկնհայտ էր, որ խոջալուեցիների զնդակահարությունը ինչ-որ մեկի կողմից կազմակերպվել էր Աղբբեջանում իշխանափոխություն կատարելու համար»:

«Մոնիտոր» անկախ թերթի աղբբեջանցի լրագրող **Էյնուլա Ֆաթուլևը** 2005թ. փետրվարին 10 օր անցկացրեց ԼՂՀ-ում, ինչի մասին պատմեց իր նյութերում և հարցազրույցներում: Նա նույնիսկ իրեն թույլ տվեց կասկածել Խոջալուի մի խումբ բնակիչների մահվան մասին Բաքվի պաշտոնական վարկածի մեջ, «... Մի քանի տարի առաջ Նաֆթալանում ես հանդիպեցի ժամանակավոր այնտեղ ապրող խոջալուեցի փախստականների հետ, որոնք բացեիքբաց խոստովանեցին ինձ... որ դեռևս հարձակումից մի քանի օր առաջ հայերը անընդհատ բարձրախոսներով զգուշացնում էին բնակչությանը՝ ծրագրվող

գործողության մասին, առաջարկում էին քաղաքացիական բնակչությանը՝ լքել բնակավայրը և շրջափակումից դուրս գալ մարդասիրական միջանցքով, Կարկառ գետի երկայնքով: Իրենց իսկ՝ խոջալուեցիների խոսքերով, իրենք օգտվել էին այդ միջանցքից և իրոք միջանցքից այն կողմ գտնվող հայ զինվորները կրակ չեն բացել նրանց վրա... Օանթոսանալով աշխարհագրական տեղանքին, ես լիովին համոզված եմ, որ հայկական միջանցքի բացակայության մասին ենթադրությունները անհիմն են: Միջանցքը իրոք կար, հակառակ դեպքում, ամբողջովին շրջափակված և արտաքին աշխարհից մեկուսացված խոջալուեցիները ոչ մի կերպ չէին կարող ձեռք բերել օդակը և շրջափակումից դուրս գալ: Սակայն հաղթահարելով Կարկառ գետից այն կողմ ընկած տեղանքը, փախստականների շարանը մասնատվել է, և չգիտես ինչու, խոջալուեցիների մի մասն ուղղվել է Նախիջևանի կողմը: Երևում է, ԱԱՀ գումարտակները հետամուտ էին ոչ թե խոջալուեցիների ազատագրմանը, այլ դեպի Ա. Մութալիբովի տապալում տանող ճանապարհի մեծ արյան »:

Ղարաբաղից Ֆատուլևի առաջին տեսանյութը «Մոնիտորում» հրապարակվելուց մի քանի օր հետո, 2005թ. մարտի 2-ն, Բաքվում, իր սեփական տան շեմին անհայտ անձի կողմից զնդակահարվեց թերթի խմբագիր **Էլմար Չուսեյնովը**: Ինքը՝ Էյնուլա Ֆատուլևը, դատապարտվեց մի ամբողջ փունջ մեղադրանքների, այդ թվում՝ պետական դավաճանության համար...:

ԱՀ պաշտպանության նախկին նախարար **Ռահիմ Գազիևը** նույնպես հավաստում է, որ Խոջալույում «Մութալիբովի համար թակարդ էր պատրաստված»: Դրանով իսկ խոջալուեցիների զանգվածային սպանության կազմակերպիչները հասան միանգամից երկու նպատակի. հեռացրին ԽՍՀՄ փլուզումից հետո ոչ պիտանի դարձած Ա. Մութալիբովին և ստացան անմարդկային մեթոդներով պատերազմ վարելու մեջ հայերին մեղադրելուն ուղղված աղմկահարույց արշավի պատրվակ: Ընդամենի, մի տեսակ երկրորդ պլան մղվեց այն փաստը, որ փետրվարի 13-ից աղբբեջանական բանակը սկսեց «Գրադ»-ից մեթոդաբար ավերել 55-հազարանոց Ստեփանակերտը և հարակից հայկական մյուս բնակավայրերը:

Helsinki Watch-ի 1992թ. ապրիլի 28-ի հարցազրույցում Խոջալուի բնակչուհիներից մեկն ասել է. «Հայերը ներկայացրել էին վերջնագիր... որ Խոջալուի բնակիչների համար ավելի լավ կլինի քաղաքից հեռանալ սպիտակ դրոշով: **Ալիֆ Հաջիևը** (Խոջալուի պաշտպանության ղեկավարը) այդ մասին մեզ հայտնեց փետրվարի 15-ին (գրոհից 10 օր առաջ), բայց դա չվախեցրեց ինձ և մյուսներին: Մենք երբեք չենք հավատացել, որ նրանք կկարողանան գրավել Խոջալուն»:

Այնուամենայնիվ, այդ նախագազուշացումների արդյունքում Խոջալուի խաղաղ բնակչության մեծ մասը, տեղյակ լինելով պատրաստվող գրոհի մասին, նախապես տեղափոխվեցին անվտանգ վայր: Խոջալուից զանգվածային տարահանումը լայնորեն լուսաբանվում էր աղբբեջանական ռադիոյով և հեռուստատեսությամբ: Ըստ որում, աղբբեջանական մամուլը նպատակադրված ձևով բացասական վերաբերմունք էր ձևավորում ավանը լքող խոջալուեցիների նկատմամբ և անընդհատ անարգանքի սյունին գամում նրանց: Նշենք, որ քաղաքի վերածված Խոջալուն առաջին հերթին լքում էին հենց բռնի ուժով այնտեղ վերաբնակեցված մարդիկ, հիմնականում թուրք-մեխսեթները, չնայած նրան, որ վերջիններս համար անընդհատ խոչընդոտներ էին ստեղծում: Ավելին, հայկական կողմից արդեն զգուշացված Խոջալուի քաղաքային վարչակազմը բնակչության տարահանման համար օգնություն էր խնդրում, բայց ապարդյուն: Այսպես, Խոջալուի քաղաքապետը մոսկովյան «Մեգապոլիս-Էքսպրես» թերթին տված

հարցազրույցում նշել է, որ «քաղաքի գրավման գործողության մասին տեղեկություններ ստանալուց հետո, ես խնդրեցի Ադրամից ուղղաթիռներ ուղարկել ծերերի, կանանց և երեխաների փոխադրման համար: Մեզ վստահեցնում էին, որ ապաշրջափակման գործողություն է պատրաստվում: Բայց օգնություն այդպես էլ չցուցաբերեցին»: Իսկ Ադրբեջանի ազգային ճակատի Ադրամի բաժանմունքի վարչության անդամ Ռ. Հաջինը պնդում էր, «Մենք կարող էինք օգնել խոջալուեցիներին, կային և ուժեր, և հնարավորություն: Մակայն հանրապետության ղեկավարները ցանկանում էին ժողովրդին ցույց տալ, որ իրենք ուժ չունեն և նորից օգնության կանչեն ԱՊՀ բանակին, նրա օգնությամբ ճնշելով նաև ընդդիմությանը»:

Ինչպես տեսնում ենք, Խոջալուի բնակիչները ուղղակի թողնվել էին բախտի քմահաճույքին, դեռ ավելին,, նրանց վիճակվելու էր դառնալ իշխանական պայքարի զոհեր:

Այնուամենայնիվ, մարտական գործողությունից առաջ Խոջալուի քաղաքացիական բնակչության մի մասը լքել էր բնակավայրը, և 1992թ. փետրվարի վերջերին տարբեր աղբյուրների տեղեկությամբ այստեղ մնացել էին 1000-ից մինչև 2500 մարդ, որոնց նշանակալի մասը կազմում էին ադրբեջանական զինված կազմավորումները: «Մեմորիալ» իրավապաշտպան կենտրոնի դիտորդները Խոջալուի ավերածությունների զննման ժամանակ հաստատեցին հրետակոծության, այլ ոչ թե համառ փողոցային մարտերի փաստը, որոնց արդյունքում կարող էին ավելի շատ զոհեր լինել: Պետք է նաև նշել, որ համաձայն ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի պահվածքը կարգավորող համապատասխան հրամանի, խստորեն արգելված էին բռնարարքները հակառակ կողմի խաղաղ բնակչության հանդեպ:

Խոջալույում մնացած բոլոր խաղաղ բնակիչները տեղափոխվել էին Ստեփանակերտ, իսկ մի երկու օր անց, իրենց կամքի համաձայն, առանց որևէ նախապայմանների առաջադրման՝ հանձնվել էին ադրբեջանական կողմին: Խոջալուի բնակիչներին Ադրբեջանին կամավոր հանձնելու փաստը, մանրագին հետաքննությունից հետո, հաստատվեց Մոսկվայի «Մեմորիալ» իրավապաշտպան կենտրոնի միության եզրակացության մեջ, ինչպես նաև այդ մասին վկայություն տրվեց պետերթուրգոյի լրագրող Սվետլանա Կուչիցկայայիի վավերագրական ֆիլմում:

Գործողության ավարտից հետո «Արցախ» հանրապետական փրկարարական ծառայության ջոկատները Խոջալույում և նրա մերձակայքում, բացի զինված ջոկատների զինվորական համազգեստով անդամներից, հայտնաբերել էին 11 քաղաքացիական անձանց դիակներ, այդ թվում մեկ երեխայի և չորս կանանց: Այսպիսով, բողազերծվում են ադրբեջանական կողմի պնդումները, այսպես կոչված, Խոջալուի ադրբեջանական խաղաղ բնակչության զանգվածային ոչնչացման մասին: Այդ մասին են վկայում նաև ադրբեջանական զինվորականների ռադիոբռնումները Ադրամում, որոնք հետագայում հրապարակվել են հենց ադրբեջանական ԶԼՄ-ներում:

Մոսկովյան «Մեմորիալ» իրավապաշտպան կենտրոնի զեկուցագրում նշվում է, որ Ադրամում, որտեղ գտնվում էին բոլոր փախստականները, անց է կացվել 181 դիակների (130 արական սեռի, 51 իգական սեռի, այդ թվում նաև 13 երեխաների) պետական դատաբժշկական փորձաքննություն: Փորձագետների եզրակացությունից հետևում է, որ 151 մարդու մահվան պատճառ էր հանդիսացել հրազենային վիրավորումը, 20 մարդունը՝ բեկորային վիրավորումը, 10 մարդունը՝ բուխ առարկայով հասցված հարվածը: ԼՂՀ պաշտոնական մարմինները դիտորդներին հայտնեցին, որ իրենց կողմից Ադրամ են հանձնվել մոտ 130 դիակներ (Խոջալուի և

Նախիջևանիկի մոտ բոլոր զոհվածները), որոնցից 96-ը հուղարկավորվել էին Ադրամում, իսկ մնացածներին տարել էին հարազատները:

Տարբեր աղբյուրների տվյալների համադրումը, այդ թվում՝ ադրբեջանական, համոզիչ կերպով ցույց է տալիս, որ ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը չէին ծրագրել և, առավել ևս, ոչ մի գործողություն չէին ձեռնարկել Խոջալու բնակավայրի քաղաքացիական բնակչության զանգվածային ոչնչացման ուղղությամբ:

Նարկ է նշել նաև, որ փետրվարի 26-ին Խոջալույում պահվում էին 47 հայազգի ռազմագերիներ, սակայն գործողության ավարտից հետո այնտեղ մնացել էին միայն 13 հոգի (նրանց թվում մեկ երեխա և վեց կին), մնացած 34-ը ադրբեջանցիների կողմից տարվել էին անհայտ ուղղությամբ և չկան տեղեկություններ այն մասին, որ իրոք նրանք հետագայում գտնվել են ադրբեջանական գերեվարության մեջ:

**Ընդհանրացնելով վերը նշվածը, կարելի է արձանագրել, որ Խոջալուի բնակիչները դարձել էին Բաքվի իշխանությունների կեղտոտ խաղերի պատանդները, որոնք այնուհետև այդ ողբերգությունը վերածեցին շահարկային քաղաքական կապիտալի: Խոջալուի բնակիչների նկատմամբ ադրբեջանական իշխանությունների կողմից կատարված դավաճանությունը պաշտոնական Բաքուն փորձում է ներկայացնել որպես հայերի վրեժխնդրություն՝ Մուսկովյան կազմակերպված արյունալի խրախուսելու համար: Ընդ որում, ամբողջ քարոզչությունն իրականացվում է վառ արտահայտված անվանարկումներով և հայերի դեմ ուղղված էթնիկ անգապության և ատելության շիկացմամբ: «Խոջալու» խաղաքարտը կանոնավոր կերպով խաղարկելով՝ պաշտոնական Բաքուն փորձում է միջազգային հանրության ուշադրությունը շեղել Մուսկովյան, Բաքվում, Կիրովաբադում, Խանլարում և Ադրբեջանի /որի ողջ տարածքով մեկ փաստորեն բացեիբաց իրականացվում էր հայերի բնաջնջում/ այլ բնակավայրերում, ինչպես նաև ԼՂՀ սահմանամերձ բնակավայրերում, մասնավորապես, Մարաղա գյուղում /ուր 1992թ. ապրիլին ներխուժած ադրբեջանական կանոնավոր բանակի ստորաբաժանումները գազանաբար հաշվառողոր տեսան մոտ 100 խաղաղ բնակիչների նկատմամբ/ կազմակերպված հայկական կոտորածներից:**

**Ցավոք, համաշխարհային հանրության կողմից առ այսօր պատշաճ զննհատականի չեն արժանացել Ադրբեջանի կողմից կատարված այդ հանցագործությունները:**

*ԼՂՀ ԱԳՆ տեղեկատվական վարչություն*

### Շայաստանյան հայագիտության երիտթուրքացունը եւ հայերենի ուրացունը

ՀՀ ԳԱԱ հայագիտական մի ինստիտուտի տնօրենը դոկտորական ատենախոսություն է պաշտպանում մեկ այլ ակադեմական հայագիտական ինստիտուտում... օտար լեզվով

Փետրվարի 21-ին, ՀՀ-ում հերթական անգամ ճշվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի հռչակած ,մայրենի լեզվի օրը: Հերթական անգամ կազմակերպվեցին տարբեր միջոցառումներ, այդ թվում՝ Մատենադարանում, այց կատարվեց եւ ծաղիկներ դրվեցին սրբազնասուրբ սրբի՝ Մեսրոպ Մաշտոցի գերեզմանին Օշակամուս, վաստակաշատ մանկավարժներ ըստ արժանվուն գնահատվեցին եւ այլն: Իհարկե, միջոցառումների մեծ մասն ավելի շուտ ցույց (տիօա) էր, քան իսկական հարգանքի արտահայտություն հայության Աուրբ Հոգու՝ հայոց լեզվի հանդեպ:

Նույն օրը, հետմիջօրեին ստանում են ,ավետիսե՝ հայաստանյան հայագիտության մեջ իր արտառոցությամբ ու լկտիությամբ առայժմ չգերազանցված լուրը՝ ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ



Դեմոյանը պատրաստվում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում գործող 004 մասնագիտական խորհրդի ս. ք. փետրվարի 28-ի Ժ. 14-ին կայանալիք (կայանալի՞ք) նիստում դոկտորական ատենախոսություն պաշտպանել ... ռուսաց լեզվով:

Անմիջապես հայտնեմ, որ հիշյալ անհատի հետ իմ անձնական կամ այլ բնույթի հարաբերությունները բնավ կապ չունեն այս գրության հեղինակման հետ: Հարցը ազգությամբ հայ, հայրենիքում ծնված, սովորած, ուսանած, ապրած ու ապրող, ՀՀ քաղաքացի, պատմական գիտությունների թեկն ածուի գիտական աստիճան ունեցող, ակադեմական հայագիտական ինստիտուտի ղեկավարի մասին է: Ամբարյականության զագաթնակետն էլ հենց այն փաստն է, որ հայոց լեզուն իր իսկ հայրենիքում, իր տիտղոսակիր ազգի պետությունում (որն իր Սահմանադրությամբ հայոց լեզուն հռչակել է պետության միակ լեզուն), Մեսրոպ Մաշտոցի գերեզմանից ոչ հեռու, աշխարհի հայագիտության կենտրոն Երևանի հենց կենտրոնում, Մաշտոցի պողոտայից ընդամենը մի քանի հարյուր մետր հեռու գտնվող ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում գիտնականների (տվյալ դեպքում՝ այս խայտառակության գլխավոր հերոսը հանդիսացող ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանն ու նրան ,պաս տվողե տիտղոսակիր հայագետ ու թուրքագետ ախպերությունը) ահավոր մեղսակցությամբ հոշոտվում է, բռնաբարվում թուրքավարից ավելի վատթար աներեւակայելի վայրագությամբ՝ ոտնատակ տալով ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ ,Լեզվի մասին օրենքն ու ենթաօրենսդրական իրավական տարբեր ակտերը, պղծվում է սրբազնասուրբ Մեսրոպ Մաշտոցի եւ միւս սուրբ թարգմանիչների, մեր հազարամեծար մատենագիրների, հայագիտության բազմահազարանոց փառանքի երախտավորների, հենց ցեղասպանության ճանապարհին հայոց լեզուն անապատի ավազների վրա երեխաներին սովորեցնող անմահ նահատակների եւ շատ ուրիշ սրբերի ու խնկելիների պայծառ հիշատակը, եւ, ի վերջո, անասելի զագանությամբ ծվեն-ծվեն է արվում հայության ու իսկապես հայ անհատի անձնական, ազգային ու մարդկային արժանապատվությունը:

Լուրն ստանալուց հետո, թողած լեռնակուտակ գործերս, ողջ ժամանակս տրամադրեցի այս (բառեր չեմ գտնում, թող ընթերցողներն այստեղ դնեն հայոց եւ ուրիշ ազգերի բանահյուսության անեծքի ու հայիոյանքի համապատասխան բառերն ու արտահայտությունները) երեսույթի խորքերը հետաքննելուն: Եվ ի՞նչ, չափազանց հետաքրքրական մանրամասներ պարզվեցին: Թվարկեն դրանցից ընդամենը մի քանիսը.

(Դարաբաղյան հակամարտությունը եւ Թուրքիան (Պատմահանձնատական վերլուծություն) վերնագրով ատենախոսության սեղմագիրը եւս հրատարակվել է ռուսերենով, եւ ըստ ընդունված կարգի, բաժանվել 004 մասնագիտական խորհրդի 17 անդամներին, որոնցից Գեթ ՄեԿԸ (դոկտորներ՝ ընդ որում՝ մեկը՝ Մաշտոցի անվան Մատենադարանի գիտաշխատող, ,մեղա՛, մեղա՛ Մաշտոցին), մի քանիսն էլ՝ համալսարանների դասախոսներ, պրոֆեսորներ, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամներ, նաեւ մեկ ակադեմիկոս) չի մերժել, հետ չի վերադարձրել սեղմագիրը՝ հենց միայն նրա լեզվի համար (նման փաստ գոնե ինձ հայտնի չէ առ այս վայրկյանը, մի գուցե նրանցից մի քանիսը մերժել է են կամ դեռ ձեռք չէ՛ն վերցրել սեղմագիրը, այդ դեպքում՝ հրապարակավ ներողություն եմ խնդրում նրանցից): Հանգիստ կերպով վերցրել են այդ լեզվական պղծությունը՝ կարծեք սովորական բան են անում: Ահա մեր ակադեմական գիտնականների ազգային ու գիտական բարոյականության մակարդակը, եթե դեռ կարելի է խոսել մակարդակի առկայության մասին...

- Ըստ ընդունված կարգի, Պատմության ինստիտուտի ցուցանակին պետք է տեղադրված լինի պաշտպանության վերաբերյալ ազդագիրը: Պարզվեց, որ ազդագրում ատենախոսության վերնագիրը հայերեն է եւ բացակայում է ատենախոսության լեզվի վերաբերյալ նշումը՝ այդ փաստը կոծկելու եւ հայոց լեզվի՝ իմ նման նախանձախնդիրների գլխի տակ փափուկ բարձ դնելու ստոր նպատակով: Մա արդեն այս

ինստիտուտի ղեկավարության ,երեք մատնոցիե խաղի վարպետության դրսեւորում է:

Ատենախոսությունը կրում է Երևանի պետական համալսարանի վերտառությունը, դա նշանակում է, որ աշխատանքը կատարվել է ԵՊՀում: Նույնիսկ անենավատ երազում կարելի՞ էր երեւակայել, որ Աճառյանների ու նրա նման մեծանուն հայագետների ոգու բնակավայր Մայր բուրդ մի օր դառնալու էր հայոց լեզվի դավաճանության մեղսակիցը... Մեղսակից է նաեւ հայագիտական մեկ այլ բուհ՝ Հայկական պետական մանկավարժական համալսարանը՝ իբրեւ ատենախոսության պաշտպանության առաջատար կազմակերպությունը: Էէ, հետո՞...

-Պատմությանբինստիտուտի տնօրեն եւ 004 մասնագիտական խորհրդի նախագահ Մշոտ Մելքոնյանը հայտարարել է, թե ինքն սկզբում մերժել է ատենախոսությունն ընդունել պաշտպանության՝ լեզվի պատճառով, եւ թե Հայկ Դեմոյանը Բարձրագոյն ռակավորման հանձնաժողովից այս խոչընդոտը հաղթահարող թույլտվություն է բերել: Ճշտեցինք, որ ըստ ,ԲՈՂ-ի կանոնակարգե կոչվող փաստաթղթի՝ թույլտրվում է ատենախոսություններ պաշտպանել օտար լեզուներով՝ տվյալ մասնագիտական խորհրդի նախագահի հայեցողությամբ (այլ հարց է, թե ենթաօրենսդրական իրավական ակտ հանդիսացող ,ԲՈՂ-ի կանոնակարգե ինչու՞ է խախտում ՀՀ Սահմանադրությունն ու ՀՀ ,Լեզվի մասին օրենքը, օրենսդրական ապօրինության այս ի՞նչ հաղթարշավ է ՀՀում՝ Աստված իմ): Այսինքն, պր. Մելքոնյանը կարող էր եւ իրավունք ուներ միանձնյա ռեզոլուցիոն կամ մերժելու Դեմոյանի օտարալեզու ատենախոսությունը պաշտպանության ներկայացնելու հարցը: Ըստ Նույնինքն Մելքոնյանի հավաստման, Դեմոյանն իրենից պահանջել է ատենախոսությունը ներկայացնել պաշտպանության՝ ինչպես կա, այլապես սպառնալով դիմել ՀՀ նախագահին (ո՞վ չգիտի, որ վերջինս ամեն կերպ հովանավորում է այս անհատին, որից քաջալերված՝ սույն պարոնը համարձակվում է ձեռք բարձրացնել արդեն հայոց լեզվի վրա): Մելքոնյանը վախենում է խոստովանել, թե ինք վախեցել է այս սպառնալիքից ու տեղի տվել, մինչդեռ իմ հետ անձնական գրույցում հայտնեց, թե Դեմոյանին ասել է՝ ,Ում ուզում ես զեն բողոքիե): Մելքոնյանի պաշտոնն զբաղեցնող որեւէ անհատ, եթե ունի անձնական ու ազգային արժանապատվություն, պետք է հրաժարվեր իր անունն առնչել այս աներեւակայելի պղծությանը ու պետք է հրաժարվեր ոչ միայն 004 մասնագիտական խորհրդի նախագահությունից, այլեւ՝ անդամությունից՝ պատմության դաժան դատաստանի առջեւ պատասխանատվություն չկրելու համար:

-Մասնագիտական խորհրդի չորս անդամների հետ կապվելով՝ երբ ցատունս արտահայտեցի (խոստովանեմ՝ գործածելով ծանր վիրավորանքներ), նրանց մոտ չնկատեցի իրենց կատարածի ահավորության մասին նշույլ անգամ: Նրանցից մեկը փորձեց արդարանալ այն փաստով, թե Դեմոյանի դպրոցական կրթությունը ռուսերեն է, մոռանալով, որ վերջինս առնվազն հինգ տարի ուսանել է ԵՊՀում հայերենով, եւ իր մասնագիտության ու զբաղեցրած պաշտոնի իսկ բերումով, իրավունք չունի առանձնաշնորհային վերապահ-հուններ անելու ռուսական կրթությանը եւ ռուսերենին: Իսկ եթե հայերենին չի տիրապետում պատշաճ չափով, ապա բարոյական իրավունք չունի գլխավորելու հայագիտական հիմնարկ, այն էլ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՄ: Նույն անդամը կատարեց նաեւ մի կարեւոր, արդեն զուտ գիտական ոլորտին վերաբերող դիտարկում, պաշտպանության ներկայացված թեման չի առնչվում հայոց պատմությանը, որքան քաղաքագիտությանը, հետեւաբար դա պետք է պաշտպանվի ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի եւ իրավունքի ինստիտուտում (չեմ զարմանա, եթե Պատմության ինստիտուտում մի օր ատենախոսություն պաշտպանեմ, օրինակ, անասնաբուծությունից):

Ահա թե ինչպիսի՞ գիտնականներ ունենք: Կարելի՞ է ակնկալել, որ սրանք եթե հայոց լեզվի իրավունքները չեն պաշտպանում իր իսկ հայրենիքում, պիտի պայքարեն հայոց պատմության թուրք-աղբեջանական, վրացական, արեւմտյան

են. խեղաթյուրումների դեմ... Ես որ նման պատրանքներ չունեմ: Հայոց արժեքային համակարգի առանցքն եղող հայրենը չպաշտպանողը չի՝ պաշտպանի այդ արժեքային համակարգի մյուս տարրերը՝ հայ արվեստն ու մշակույթը, հայոց պատմությունը եւ հայագիտությունն առհասարակ, հայոց ինքնությունը, հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը, հայոց արժանապատվությունն ու, ի վերջո, հայրենի հողը ու չի ձգտի նրա բռնագրավված տարածքների ազատագրման:

Ատորեւ ներկայացնում եմ հայաստանյան հայագիտության երիտթուրքերի՝ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում գործող 004 մասնագիտական խորհրդի անդամ, հայոց լեզվի դավաճանների սեւ ցուցակը (բացի առաջին երկուսից՝ մնացյալներն ազգամվան այբբենական շարքով, հնարավոր է, որ ոմանց տվյալները պակասավոր լինեն):

**Աշոտ Մելքոնյան** (պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն, 004 մասնագիտական խորհրդի նախագահ)

**-Հակոբ Մուրադյան** (պատմ. գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտական քարտուղար, 004 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար)

**-Վլադիմիր Բարխուդարյան** (պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս)

**-Էդուարդ Դանիելյան** (պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի բաժնի վարիչ)

**-Էդիկ Ջոհրաբյան** (պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ., ԵՊՀ դասախոս)

**-Վալերի Թունյան** (պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ.)

**-Գեորգ Խուդինյան** (պատմ. գիտ. դոկտոր, Վենե համահայկական հանդեսի գլխավոր խմբագիր, ՀՀԳ անդամ)

**-Սիեր Կարապետյան** (պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ., Հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց պատմության ամբիոնի վարիչ)

**-Արարատ Հակոբյան** (պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ., եղել է ՀՀԳ անդամ)

**-Բարգեճ Հարությունյան** (պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ)

**-Համլետ Հարությունյան** (պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ.)

**-Կարեն Մաթեոսյան** (պատմ. գիտ. դոկտոր, Մաշտոցի ամվան Մատենադարանի առաջատար գիտաշխատող)

**-Հայրապետ Մարգարյան** (պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ., ԵՊՀ դասախոս)

**-Էդիկ Մինասյան** (պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ., ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան)

**-Յելիք Մովսիսյան** (պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ., Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ)

**-Արամ Աիծոնյան** (պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ԵՊՀ ռեկտոր, Նժդեհագետ, Հայաստանի Հանրապետական մեդիայանե կուսակցության խորհրդի անդամ)

**-Ամատունի Վիրաբյան** (պատմ. գիտ. դոկտոր, Հայաստանի Ազգային արխիվի տնօրեն)

Այս սեւ ցուցակին պետք է ավելացնել պաշտոնական երեք ընդդիմախոսների եւ առաջատար կազմակերպության անունները.

**-Ռուբեն Աաֆրատյան** (պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ Արելեվագիտության ինստիտուտի տնօրեն, թուրքագետ),

**-Վալերի Թունյան** (պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ.),

**-Արսեն Ավագյան** (պատմ. գիտ. դոկտոր, դիվանագետ, թուրքագետ, զբաղեցրել է Աեւծովյան տնտեսական համագործակցություն կազմակերպությունում ՀՀ ներկայացուցչի պաշտոնը, նստավայրը՝ Ատամբուլ),

- Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան (քեզ եւս մեղա՛, հայոց լեզվի դայինության կոչ անող Մեծ լուսավորիչ Աբովյան):

Արժե՛ նաեւ մշել, թե ատենախոսությունն ավարտվում է ՀՀ-Թուրքիա արձանագրությունների շարադրանքներով, իսկ ատենախոսության վերջին բառը (Թուրքիա)-ն է: Հավազանց պերճախոս պատահականություն... (ատենախոսության բուն բովանդակության գիտական ու քաղաքական գնահատականը կտանք հետագայում):

Հարց եմ տալիս, ստորագրողս՝ 1988 թվականին սփյուռքահայ ուսանող Երեւանում, պետք է մասնակցեի կրթախյան շարժման, դրա համար առեւանգվել սովետական համապատասխան մարմինների կողմից, հինգ տարուց ավելի մնայի, քստորավայրե Բեյրութում, սպա հայրենադարձելի ու 82-ամյա մորս էլ հայրենադարձի որպեսզի ուրացող պաշտոնյաներ եւ հայագետներ հայոց լեզուն բռնաբարեին հենց Երեւանում: Հայի համար, Հայաստանի Հանրապետությունը աշխարհում միակ պետությունն է (չհաշված ԼՂՀ-ն), որտեղ նա բացարձակ իրավունքն ունի լսելու հայերեն, խոսելու հայերեն, կարդալու հայերեն եւ առհասարակ հայերենի առնչվելու իր կենսագործունեության բոլոր ոլորտներում, ինչպես սահմանված է ՀՀ Լեզվի մասին օրենքի առաջին հոդվածում: Բայց ի՞նչ ենք տեսնում իրականում՝ օտարալեզու ցուցանակներ ու պիտակներ, օտարալեզու կամ հայերեն հիշեցնող հողաբաշխ խոսքերով ցածրորակ, անբարոյական սերիալներ ու ֆիլմեր... ո՞ր մեկը թվարկես: Հերթը հասցրեցին արդեն ակադեմիական հայագիտական հիմնարկներին: Ոչ, դա զոնե ես թույլ չեմ տա ոչ իմ ողջության, ոչ իսկ իմ դիակի վրայով: Հաշվի առնելով ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում հայոց լեզվի գործառնությունների աստիճանական վերջին շրջանում սրընթաց թափ ստացած հանընդհանուր նահանջը, առաջարկում եմ այս կառույցը վերանվանել ՀՀ Գիտությունների ապագային (կամ՝ հակագային) ակադեմիա: Դա ավելի սազական է:

Ի դեպ, հենց այս օրերին Հայկ Դեմոյանը գտնվում էր Անթիլիասում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության կազմակերպած հերթական միջոցառման մասնակցելու հրավեր ստացած լինելով: Հետաքրքրական է նախ այն փաստը, որ ՀՀ-Թուրքիա ստորագրված արձանագրություններին այդքան կոշտ կերպով ընդդիմացած Արամ Ա-ը շարունակում է հրավեր ուղղել այդ փաստաթղթերի օգտին ոգի ի բռին քարոզչություն կատարած անհատին: Առավել հետաքրքրական է իմանալ, թե հիմա՞ ինչ դիրքորոշում է ունենալու Մաշտոցին սրբացրած Հայ եկեղեցու կաթողիկոսական երկու աթոռներից մեկի գահակալ Արամ վեհափառը՝ նույն անհատի այս նոր հերոսությունն է իմանալով... Մայր աթոռի գահակալի մասին չեմ էլ մտածում, քանի որ շինարարություններով գերաբարձ է լինելով, այսպիսի մանրուքներով է հետաքրքրվելու ոչ ժամանակ ունի, ոչ էլ ցանկություն... Աստվածորդին հայտարարել էր, թե ամեն մեք պիտի ներվի, բացի Սուրբ Հոգուն անարգելուց: Հեռու ինձնից մամուլային փորձն անգամ Քրիստոսի ետ, սակայն նրա այս խոսքի նմանությունը հայտարարում եմ. ամեն մեք կարելի է ներել, բայց հայոց Սուրբ Հոգու՝ հայոց լեզվի՝ հայագիտական հատի կողմից անարգումն աններելի է:

Սույնով դիմում եմ ՀՀ Ազգային անվտանգության ծառայությանը՝ զբաղվելու ՀՀ պետական ու հայության ազգային անվտանգությանն սպառնացող այս հարցով: Լեզվի պետական տեսչություն կոչվող մարմինն չեմ դիմում, քանի որ այնտեղ մեմակ մեռելներ են...

Եթե Երեւանի քաղաքապետարանը հատել է տալիս ծառեր ու դրանց բները բետոնապատել տալիս՝ ինչ-որ կրպակներ տեղադրելու համար, ՀՀ ԳԱԱ-ն հատում է մեր ազգային ինքնության բուն արմատը՝ հայոց լեզուն: Հետեւաբար, արժանապատվություն ունեցող հայեր, ոտքի: Սի հապաղեք, այս վայրկյանին իսկ բարձրացրեք ձեր բողոքի ձայնը, անարգանքի այսինքն գամեք հայոց լեզվի դավաճաններին, կազմակերպեք ՀՀ օրենսդրությամբ թույլատրելի բողոքի միջոցառումներ արտահայտելու համար ձեր ցասունը ՀՀ անկախությանն ու հայոց ազգի լինելությանն սպառնացող լեզվական հակահեղափոխության դեմ:

**Արմենգիր, հայ մարդ:**

Յ. Գ. 004 մասնագիտական խորհուրդը պետք է մերժի նույնիսկ միտ կայացնել Հայկ Դեմոյանի օտարալեզու ատենախոսության պաշտպանության օրակարգով, կամ էլ միտք բացելուց անմիջապես հետ խորհրդի՝ ազգային արժանապատվությունը պահպանած անդամները պետք է հրաժարվեն միտքին մասնակցելուց՝ հայտարարելով հրաժարման բուն պատճառի մասին: Փոխարենը խորհուրդը Դեմոյանին պետք է շնորհի որոշակի ժամանակ՝ հայերեն թարգմանելու ատենախոսությունն ու հայերեն տպագրելու դրա սեղմագիրը, եւ նոր միայն ներկայացնի խորհրդին՝ հրապարակային պաշտպանության համար: Այլապես, եթե փետրվարի 28-ին պաշտպանությունը կայանա այնպես, ինչպես են ատենախոսության ու սեղմագրի լեզուն (շատ հավանաբար՝ ողջ ընթացակարգն էլ լինելու է օտար լեզվով, իսկ եթե հայերենով է լինելու՝ դա արդեն խեղկատակություն է, կրկես կամ խամաճիկների թատրոն), նույն պահից ես հրաժարվում եմ նույն՝ 004 մասնագիտական խորհրդի՝ տասը տարի առաջ ինձ շնորհած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանից՝ այդ հավաստող փաստաթուղթը չարտելով դավաճանների երեսին: Լուսահոգի Արիստոտելի Բարաքն իր մեկ բանաստեղծությունն սկսում էր հետեւյալ երկտողով. Ավելի լավ է կոչվեն կատու կամ շուն «Քան թե փաշա թուրք անասուն»: Նույն դատողությամբ, ավելի լավ է մնան ՄԱՐԴ եւ ՀԱՅ, քան դավաճանների հետ առնչակցվել պատմագիտության գիտական աստիճանով: Ի՞նչ իմանայի, որ ինձ այդ աստիճանը շնորհած անձերից շատեր ստորության գերագույն՝ դավաճանության մակարդակին .պիտի բարձրանային... Ափսոսում եմ այդ անդամներից մի քանիսի հետ բարեկամացած լինելուս, ոմանց հետ էլ՝ նույնիսկ հաց կիսած լինելուս համար... Հարամ լինի մեզաների հետ իմ կիսած հացը: Եթե հացը հայի համար սրբություն է, հայոց լեզուն նույնքան, եթե ոչ ավելի սրբություն պետք է լինի:

**Գեորգ Յազըճյան**  
(ազատ լրագրող, պատմական գիտությունների թեկնածու)  
Երևան, 24 փետրվարի 2012 թ.  
Հայկական լրատվամիջոցներից խնդրվում է ազատորեն արտատպել:

### Մշակույթ

#### «Արդի հայերենի բացատրական բառարանը» նաև համացանցում

Մայրենի լեզվի միջազգային օրվա առիթով Հայկական գիտական համագործակցությունը հասարակության լայն շերտերին է նվիրում Էդուարդ Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի» էլեկտրոնային տարբերակը: Ինչպես HayNews.am-ին հաղորդում են նախաձեռնության հեղինակները՝ «Արդի հայերենի բացատրական բառարան» (Ե., 1976) երկհատոր գիրքը՝ հայերենի բառապաշարի ընդգրկմամբ (136 հազար բառ և 11 հազար դարձվածք) և բառահոդվածների ձևիմաստային բազմաբնույթ դասադասումներով ու պարզաբանումներով մնում է բառարանագրական բացառիկ ձեռքբերում: «Հայկական գիտական համագործակցությունը մեկ անգամ ևս շնորհավորում է բոլորին Մայրենի լեզվի միջազգային օրվա առիթով և նշում, որ յուրաքանչյուր օր պետք է առանձնանա մայրենի նկատմամբ մեր ունեցած հոգատար վերաբերմունքով: Բոլորս ենք պարտավոր պահպանել մեր լեզուն և որքան հնարավոր է անաղարտ փոխանցել այն գալիք սերնդին», - նշված է Հայկական գիտական համագործակցության շնորհավորական ուղերձում: «Արդի հայերենի բացատրական բառարանը» ներբեռնելու համար կարող եք այցելել հետևյալ հղմամբ՝ <http://armscoop.com/wp-content/uploads/Armatakan/AgayanBararan.rar>: Իսկ աշխատանքն ընթերցելու համար անհրաժեշտ է «DJVuReader», որը կարող եք ներբեռնել <http://network.am/?q=djvu&flag=3> հղմամբ:

### Հայերեն տպագրության 500-ամյակին (1512-2012)

Համարդե՛ք՝  
Դոկտոր Էր. Բաղդասարյանը

Շարունակությունը համար 167-ից

1789-ից Վենետիկում գործել է Մխիթարյան տպարանը, որը շուտով դարձել է Եվրոպայի հայկական տպագրության կենտրոն: 1771-ին Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսը Էջմիածնում հիմնել է տպարան, որտեղ 1772-ին տպագրել է կաթողիկոսի «Զբօսարան հոգեւոր» գիրքը՝ անդրանիկ հրատարակություն Հայաստանում: Տպարանի տառերն ու պատկերները հիմնականում պատրաստել է Հարություն Էջմիածնեցին: Սինչև դարավերջ տպարանը լույս է ընծաւել տասնյակից ավելի գրքեր: 1772-ին տպագր. գործն սկզբնավորվել է Հնդկաստանի Մադրաս քաղաքում, ուր 1794-96-ին Յ. Շմալոնյանը հրատարակել է առաջին հայկական պարբերականը՝ «Ազդարարը»: Հայկական տպագրությունը Ռուսաստանում սկսվել է 1781-ից: Գ.Խալաթարյանը Պետերբուրգում հրատարակել է նախ մի այբբենարան (1781), ապա՝ այլ գրքեր: 1889-90-ին այս տպարանը տեղափոխվել է Նոր Նախիջևան, այնուհետև՝ Աստրախան:

1512-1800-ին հայկական տպագրության է եղել Վենետիկ, Կ.Պոլիս, Հռոմ, Փարիզ, Բավիա, Ցյուրիխ, Բեռլին, Քյոլն, Մայնի Ֆրանկֆոլտ, Լվով, Նոր Ջուլա, Լիվոռնո, Ամստերդամ, Սարսել, Լոնդոն, Լայպցիգ, Պադուա, Պարմա, Հառլեն, Նյուրնբերգ, Չմյունհիա, Վադարշապատ, Մադրաս, Տրիեստ, Կալկաթա, Պետերբուրգ, Նոր Նախիջևան, Աստրախան քաղաքներում: Այդ ժամանակամիջոցում տպագրվել են ավելի քան 1100 անուն հայերեն գրքեր: Հայկական հնատիպ գրքերն իրենց բովանդակությամբ, յուրահատուկ ձևավորմամբ, նկարագրադրմամբ այժմ հազվագյուտ հրատարակություններ և պատմական ու գիտական մեծ արժեք ունեն:

1801-1920-ին հայկական տպագրության գլխ. կենտրոնը Վադարշապատն էր, որտեղ հրատարակվել են դասագրքեր, կրոն-եկեղեց. գրքեր, հայ մատենագիրների երկեր, հայագիտ. աշխատություններ, «Արարատ» հանդեսը: Սակայն տպարաններ են հիմնվել նաև այլ վայրերում. 1827-ին՝ Շուշիում, 1858- ին՝ Վանում, 1863-ին՝ Սուշում, 1876-ին՝ Ալեքսանդրիայում, 1890-ին՝ Նոր Բայազետում, 1909-ին՝ Գորիսում, ինչպես նաև. Կա- ռինում, Խարբերդում, Սեբաստիայում, Մարզվանում, Երզնկայում, Կարսում, Աշտարակում և այլուր: Երևանում 1875-ին տպարան է հիմնել Չ. Հակոբյանը (Գևորգյան), որին հետո միացել է Էմին Տեր-Գրիգորյանը: Այստեղ առաջինը հրատարակվել է Ա. Գուլամիրյանի կազմած օրացույցը (1875): 1880-ից տպագրվել է Երևանի առաջին պարբերականը՝ «Պսակը»: Այդուհանդերձ, 1801- 1920-ին հայկական տպագրությունը շարունակվել է գլխավորապես Հայաստանից դուրս: Այդ շրջանում հայկական տպագրություն է եղել նայել Մոսկվայում, Պետերբուրգում, Թեոդոսիայում, Օդեսայում, Նոր Նախիջևանում, Ախալցխայում, Սուխումում, Անապայում, Արմավիրում, Եկատերինոդարում, Պյատիգորսկում, Սարատովում և այլուր: Կարևոր էր Թիֆլիսում Ներսիսյան տպա- ռանի ստեղծումը, որը գործել է 1823-ից մինչև 1860-ական թթ.: 1858-ին այստեղ է առաջին անգամ լույս տեսել Խ. Աբովյանի «Վերջ Հայաստանի» վեպը: Թիֆլիսում մինչև 1920-ը հայ գրքեր են տպագրվել նաև մի քանի

տասնյակ այլ տպարաններում: 1870-ին հայկական տպագրություն է սկսվել Բաքվում, որն Այսրկովկասում դարձել է հայ գրքի հրատարակման երկրորդ կենտրոնը (Թիֆլիսից հետո): Կ.Պոլխան իր 130-ից ավելի հայկական տպարաններով, 19-րդ դ. և 20-րդ դդ. սկզբին հակական հրատարակությունների քանակով պահպանել է առաջատար տեղը: Հայկական տպագրության կարևոր կենտրոն է եղել նաև Ձմյուռնիան, որտեղ, շուրջ 50 հայկական պարբերաթերթերից բացի, տպագրվել են հարյուրավոր հայերեն գրքեր:

Շար. 2

### ԸՆՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Պրոֆ. Ծ. Պ. Աղայան

Օսմանյան տիրակալության տակ հեծող ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը կարող էր պասկվել հաղթանակով այդ ժողովուրդների միասնական ճակատի ստեղծման և փոխադարձ օգնության պայմաններում:

1848 թ. ֆրանսիական հեղափոխության և լուսավորական հանրահամուր շարժման ազդեցության տակ սկսած XIX դ. երկրորդ կեսից Օսմանյան կայսրության լծի տակ հեծող ժողովուրդների ազատագրական շարժումները նոր թափ ու ընթացք են ստանում: Ձեյթունցիներին օգնելու հասարակական շարժումը, այդ նպատակով բազմաթիվ կազմակերպությունների երևան գալը, ճնշված ժողովուրդների ազատագրման հարցերի լայն քննարկումները մեծապես նպաստեցին քաղաքական մտքի զարգացմանը հայ իրականության մեջ: Եվրոպական առաջավոր մտածողներից շատերը ևս սկսեցին հետաքրքրվել ճնշվող ժողովուրդների շահերի պաշտպանության խնդիրներով:

Այդ տեսակետից ուշագրավ երևույթ էր հայտնի արևելագետ և հասարակական գործիչ Վ. Լանգլուայի նախագահությամբ 1862 թ. Փարիզում գեյթունցիներին օգնող հանձնաժողովի ստեղծումը: Այդ հանձնաժողովի աշխատանքին մասնակցում էին շատ գրողներ, քաղաքական ու հասարակական գործիչներ, որոնց թվում նաև հայ գործիչներից Կ. վ. Շահնագարյանը, Ա. Մուրադյանը և ուրիշներ: Փարիզում գտնվելու ժամանակ այդ հանձնաժողովի աշխատանքներին մասնակցել է նաև Պաղտասար Նորատունկյանը, որը և կազմել է Հայաստանի ազատագրությանը նվիրված իր հայտնի մամակ ծրագիրը: Նա ամբողջովին կլանվում է ֆրանսիական հեղափոխության գաղափարներով և ընդունում նրա պայքարի մեթոդները: Կարևորն ըստ Նորատունկյանի այն է, որ հայերին ապստամբական ոգի ներարկվի և ժողովրդին վստահություն ներշնչվի սեփական ուժերի նկատմամբ: Նորատունկյանը դատապարտում էր մեծ տերությունների շահախնդրությունը և բացահայտում նրանց օգնությանը դիմողների մոլորությունը:

Ժողովրդի հայրենասիրական ուժերը կազմակերպելու համար նա անհրաժեշտ էր համարում ստեղծել եռյակներից կամ հնգյակներից բաղկացած գաղտնի կոմիտեներ, գործունեության ընդհանուր նպատակը դարձնել «Հայաստանի շղթաների խորտակելը»: Այդ ծրագրի իրականացման համար Պ. Նորատունկյանը լինում է Իտալիայում, Եգիպտոսում և այլ երկրներում, խորհրդակցում բազմաթիվ ականավոր գործիչների հետ:

Այդ և նմանօրինակ այլ ծրագրեր, սակայն, դեռևս լայն մասսայական հեղափոխական ելույթներ ու իրական շարժում ծավալելու խնդիր չէին առաջադրում:

Շատ ու շատ հայ, լեհ, բուլղար և ճնշված այլ ժողովուրդների գործիչներ մոլորված ծեծում էին եվրոպական տերությունների դռները, օգնություն խնդրում և խաբուսիկ հուսադրումներով սպասում այդ օգնությանը: Մասնավորապես շալյ խոստումներ էր տալիս Նապոլեոն Գ-ը, որ Ձեյթունի ապստամբության ժամանակ իրեն դրսևորում էր իբրև «հայերի շահերի պաշտպան»: Բայց դա լոկ արտաքին շղարշ էր: Իրականում ֆրանսիական կառավարությունը, ելնելով իր շահերից, հմտությամբ օգտագործում էր վտարանդի հեղափոխականներին: 1870 թ. ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ նա նորից հրապարակ հանեց լեհական հարցը, որսպեսզի լեհերին զինվորագրի իր բանակում՝ խոստանալով Ավստրիայի և Պրուսիայի դեմ հաղթանակ նվաճելու դեպքում օգնել լեհերի անկախության վերականգնմանը: Այս հույսերով տարված շատ վտարանդիներ լայն աշխատանք էին կատարում նաև ցարիզմից և սուլթանի կառավարությունից դժգոհ բոլոր ժողովուրդների մեջ:

Պետք է նշենք, սակայն, որ Ձեյթունի հերոսամարտերից հետո հայ իրականության մեջ տիրապետողը ժողովրդի ազատագրության գործն իր սեփական պայքարի հետ կապելու գաղափարն էր:

Շար. 11

### Սոհեր

#### Մեր անցած ճամբան

Թ. Դարախանյան Սիրակցի

Վերադառնալով ծառայության... առաջին 3 ամիսը դաժան և դժվար ու կառուցողական զինվորությանը հաղթահարելով արդեն մյուս 3 ամիսը մի հանգիստ շնչելու առիթ ունեցանք արձակ ուրբաթ օրերը հանգիստ և ազատություն վայելելու և այս ժամանակի ընթացքում միայն կարողացա մեկ կիրակի ժամս դնել և այցելել Տեր Մինասին և Տիրուհուն: Թէ ինչ ազգային հարստության կորուստ զգացի միայն Աստված իմանա: Տեր Մինասի զավակները 2 տղա 1 աղջիկ արդեն Մասչեթ Սուլայմանից Ահվազ քաղաք էին փոխադրվել: Տեր Մինասը ու տիրուհին իրենց զավակների և թոռնիկների մասին այնքան սիրով ու կարոտով աղոթներով խոսեցին որ փվաց թե արդեն կողքի պատին կպած եկեղեցու մեջ մոմերի առաջ սրբերն իրենց օրհնանք էին բաժանում: Անբացատրելի էր սրբացած Տեր Մինասի այդ լրիվ ճերմակած մորուսն ու գլուխը և տիրուհու աղոթքի մրմունջները: Աղաչեցին մնամ իրենց մոտ մի հաց ու պանիր կիսեմ, հենց Տիրուհու պատրաստած արբեցող չայով էլ գոհ մնացի: Երկար գրույցից ժամանակս կարճ էր խնդրեցի տեր Մինասի աջը համբուրեմ բայց ասավ «բալամ ջան, դու մերոնցից ես, արի գլխիտ մի երկու բերան օշնանք կարթամ օր խերով բարով գործդ տեղ հասցնես»: Գլուխ կախեցի ու հենց այն զգացի որ Թաթեվոս մեծ պապս՝ ձեռքը գլխիս դրած լցնում էր իմ հոգին բարի ուժերով: Օրհնանքը ավարտելուց ասավ «Աստված օրհնի, բալամ ջան քանի էստեղ ենք արի գլուխ քաշէ»: Խոստացա նորից գամ, բայց էլ առիթ չեղավ, իրենց օրհնանքը մաշկիս վրա երկար մնաց, հույսով իմձ ներած լինեմ: Ապա... այդ հսկայ եկեղեցու շենքը և բակը այդ քաղաքի բազարի մեջտեղում սրտիս ծանրություն արավ, կարծես մի երկու օր էր շունչս վառուղ մոմերի բուրմունքն էր հոտոտում, դժվար էր մոռանալ:

Վերջապես 6 ամսեա Ձինաւարժութեամբ ծրագիրը խիտ էր բոլոր իր դժվարություններով, բայց հաջող ավարտվեց և շնորհաբանք ասել որ այդքան բազմաթիվ զինվորների մեջ գրեթէ միայն ես էի ՀԸՅ: